

**Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման
հայեցակարգի վերլուծություն**

Յեղիակներ՝

**Դոկտոր Զեթրին Նայման-Մետկալֆ, Տալլինի տեխնոլոգիական համալսարանի
պրոֆեսոր, իրավագիտության և տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ
և**

**Դոկտոր Անդրեյ Ռիխտեր, Մոսկվայի պետական համալսարանի ժուռնալիստիկայի
ֆակուլտետի պրոֆեսոր**

Ամփոփագիր

Սույն վերլուծության մեջ ուսումնասիրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2009 թ.-ի նոյեմբերի 12-ին հաստատված «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը» (այսուհետ՝ «Հայեցակարգ»): Վերլուծությունը կատարվել է միջազգային պարտավորությունների, ինչպես նաև միջազգային և եվրոպական լավագույն չափանիշների տեսակետից: Օգտագործվել են նաև Հայաստանում հեռարձակման թվային համակարգին անցնելու վերաբերյալ նախկինում հրապարակված զեկույցները և ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի կողմից պատվիրված «Հեռարձակման թվային համակարգին անցնելու ուղեցույցը», որը հրապարակվել է 2010 թ.-ի մարտ ամսին: Եվրոպական լավագույն պրակտիկան արտացոլված է Եվրոպայի հորիզոնի (ԵԽ) և Եվրոպական Միության (ԵՄ) տարբեր փաստաթղթերում:

ՉԼՄ-ների ազատության տեսակետից, հեռարձակման թվային համակարգը լսարանին ավելի լայն ընտրության, իսկ հեռարձակողներին՝ տեղեկատվություն տարածելու ավելի մեծ հնարավորություններ կարող է տալ: Սակայն, հեռարձակման թվայնացումը կարող է նաև առաջ բերել որոշ բացասական ազդեցության ռիսկեր, եթե կառավարությունները և կարգավորող մարմինները հաշվի չառնեն որոշ կանոններ և սկզբունքներ: Այդպիսի հնարավոր ռիսկերից է՝ մենաշնորհացման և լրատվամիջոցներում բազմակարծության նվազեցման վտանգը: Թվայնացման նախնական ներդրումային ծախսերը մեծ են և վերադարձ են ապահովում միայն որոշ ժամանակ անց: Թվայնացումը չի լուծում ՉԼՄ-ների ոլորտում արդեն իսկ առկա խնդիրները: Այն կարող է նույնիսկ լրացուցիչ խնդիրներ առաջացնել: Թվային հեռարձակման ժամանակաշրջանում աճում է հանրային հեռարձակողի կարևորությունը, որը պետք է կարողանա պատշաճ ձևով կատարել իր վրա

դրված պարտականությունները: Ալիքների թվի ավելացումն ինքնաբերաբար տեղեկատվության մատչելիության և անհավասարությունների վերացման չի բերում: Կարևոր է իրական բազմազանություն ունենալ:

Տեխնիկական հարցեր և հաճախականությունների տիրույթ: Հայաստանում թվայնացումը պետք է տեղի ունենա մինչև 2015թ. Անալոգային հեռարձակումը չպետք է դադարեցվի այնքան ժամանակ, մինչև գրեթե ողջ բնակչությունը (և ոչ միայն տարածքը) չկարողանա թվային հեռարձակմամբ ծրագրեր ընդունել, ինչպես նշված է Հայեցակարգում: Միաժամանակ անալոգային և թվային հեռարձակման համակարգեր ունենալը թանկ է, ուստի այդ ժամանակաշրջանը պետք է որքան հնարավոր է կարճ լինի: Ինչ վերաբերում է գործածվող տեխնոլոգիային, քննարկվում են տարբեր MPEG ստանդարտներ՝ սկսած MPEG 2-ից մինչև փորձարարական MPEG 12-ը, սակայն պետք է հստակ ընտրվի մեկը: Խորհուրդ չի տրվում ընտրել ավելի առաջադեմ ստանդարտ, քան սովորական է ռեգիոնում:

Հեռարձակման հասանելիություն: Կարևոր է բացառել անվճար ծառայություններից և անդրազգային հեռուստատեսությունից դուրս մնալը: Ապակողավորման սարքերի սուբսիդավորման հարցը կարևոր է: Դրա մասին խոսվում է Հայեցակարգի մեջ: Գործնականում դա պետք է իրականացվի հստակ և արդար չափանիշներով: Հնարավոր է և անհրաժեշտ է խրախուսել, որ ոլորտում ընդգրկված ընկերությունները տարբեր տեսակի ապակողավորման սարքեր տրամադրի ցածր գներով: Միևնույն ժամանակ, ապակողավորման սարքերը պետք է փոխգործակցելի լինեն:

Թվայնացման գործընթացի ֆինանսավորումը մեծ խնդիր է հեռարձակողների և կառավարության համար: Հայեցակարգում արտացոլված չեն հեռարձակողների բոլոր ծախսերը, որոնք կապված են մի համակարգից մյուսին անցնելու հետ: Ողջամիտ է, որ ծախսերի մի մասը հոգան մասնավոր հեռարձակողները, սակայն խրախուսման ավելի կոնկրետ միջոցներ կարող են անհրաժեշտ լինել: Հայեցակարգում խոսվում է ավելի երկար գործողության ժամկետ ունեցող լիցենզիաների մասին, սակայն ներդրումներ խրախուսող մեխանիզմները հստակ մատնանշված չեն: Եվրոպայում շատ լավ գիտակցում են, որ պետական ֆինանսավորումն անհրաժեշտ է, սակայն այն պետք է կատարվի ներպետական կանոնների համաձայն, ըստ որոնց արգելվում է առանձին ընկերություններին անհարկի առավելություն տալը: Անհրաժեշտ է խուսափել հանրային կամ մասնավոր ընկերությունների կողմից շուկայի

մենաշնորհացումից: Անհրաժեշտ է իրականացնել հաղորդիչ ցանցի սեփականաշնորհումը, ինչը կարող է թվային համակարգին անցնելու գործընթացի ֆինանսավորման միջոց լինել:

Ենթակառուցվածքային խնդիրներ: Սովորաբար, թվային համակարգում հեռարձակողներն այլևս իրենց սեփական ենթակառուցվածքների տերերը չեն, այլ օգտագործում են մեկ ուրիշի սեփականություն հանդիսացող ենթակառուցվածքները: Կարևոր են ենթակառուցվածքների հասանելիության և փոխկապակցվածության մասին կանոնները: Հայեցակարգում խոսվում է ենթակառուցվածքների և ազատ և հավասար հասանելիության մասին: Հեռարձակողներին կարելի է օգնել կենտրոնացված ցանցերի միջոցով, ինչպիսիք են՝ Հայաստանի հեռուստատեսային և ռադիո հաղորդիչ ցանցը: Մի քանի հեռարձակողներ կարող են օգտվել մեկ մուլտիպլեքսից. լիցենզիան հեռարձակողին իրավունք է տալիս որոշակի ալիքով որոշակի ծրագրերի շարք առաջարկել, իսկ հաճախականության լիցենզիան տրվում է երրորդ կողմին, որը մուլտիպլեքսը ղեկավարող ընկերությունն է: Հայեցակարգում պետք է ներառել մուլտիպլեքսների գներին և պայմաններին վերաբերող կանոններ, որոնք պետք է արգելեն փոխսուբսիդավորումը, քանի որ թվայնացումը չպետք է թույլ տա գերիշխող դիրքի չարաշահում: Հաղորդիչների սեփականությունը երբեք չպետք է ազդի ծրագրերի բովանդակության և հեռարձակվող ալիքների մասին որոշման վրա:

Կարգավորման հետ կապված խնդիրներ և լիցենզավորում: Նախատեսվում են առանձին լիցենզիաներ բովանդակության և հեռարձակման համար: Հայեցակարգում նկարագրված են լիցենզիաների տարբերությունները, սակայն անհրաժեշտ է ավելի մանրամասն և հստակ ձևով սահմանել այդ ամենին հասնելու գործընթացի կանոնները, մանավանդ որ հայեցակարգը հիմնված է մի քանի տարի առաջ մշակված ռազմավարության վրա: Անալոգային լիցենզիաների տրամադրումը սառեցնելու գաղափարը ողջամիտ է, քանի որ դա հեշտացնում է հեռարձակողների լեզիտիմ ակնկալիքների հետ կապված հարցերը: Սակայն հեռարձակման լիցենզիաների մրցույթների սառեցումը թվայնացման գործընթացի առաջին քայլը չպետք է լինի: Այն չպետք է օգտագործվի բազմազանությունը սահմանափակելու համար և պետք է մշտապես կիրառվի առանց խտրականության: Հայեցակարգում նշված է, որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հանդիսանում է անկախ կարգավորող մարմին, սակայն դրա դերն այնքան էլ պարզ չէ:

Ծրագրեր: Թվային հեռարձակումը պետք է բերի ոչ թե ծրագրերի թվի աճի, այլ բազմազանության ընդլայնման: Մրցակցության և բազմազանության խթանումը տեղին նշված է որպես հայեցակարգի հիմնական նպատակներից մեկը: Միևնույն ժամանակ, մտահոգություն է առաջացնում խնդիրները բաժնում նշված այն կետը, ըստ որի անհրաժեշտ է ապահովել ժառանգության պահպանում, մշակութային բազմազանություն և բազմակարծություն, ինչը հարմար չէ բոլոր ծրագրերի համար: Կարևոր է, որ կարգավորող մարմինը քայլեր ձեռնարկի, որ կոնցենտրացիան կանխելուց բացի բարձրացվի բովանդակության մեջ բազմակարծության մակարդակը: Հայեցակարգով առաջարկվում է մեկ անվճար սոցիալական փաթեթ և մի քանի վճարովի փաթեթներ ստեղծել, սակայն հայեցակարգում բացատրված չէ, թե այդ սոցիալական փաթեթը ինչ մեթոդով է ձևավորվելու:

Հեռարձակման մի համակարգից դեպի մյուսն անցնելու ժամանակաշրջանում, երբ բովանդակությունը շատ բազմազան է, կարգավորող մարմինը պետք է հատկապես զգոն լինի, որպեսզի հեռարձակման բովանդակության չափանիշները չխախտվեն: Հայեցակարգում նման պահանջներ չկան:

Հանրային հեռարձակողի դերը: Հայեցակարգում խոսվում է հանրային և մասնավոր հեռարձակողների հավասարակշռված համակեցության մասին: Սակայն «հավասարակշռության» եությունը պարզ չէ: Հայաստանում բաց են մնում նաև հանրային հեռարձակողի ֆինանսավորման խնդիրները:

Հայեցակարգում գրված է օրենսդրության փոփոխության անհրաժեշտության մասին, սակայն այդ փոփոխության եությունը այնքան էլ պարզ չէ: Այն, թե ինչ նոր օրենսդրական ակտեր են անհրաժեշտ կամ ինչը պետք է փոփոխվի, կախված է հեռարձակման ոլորտի օրենսդրական դաշտի այսօրվա կառուցվածքից: Թվայնացման մասին հատուկ օրենք ունենալու կարիք չկա, սակայն ռազմավարությունը պետք է հիմնված լինի համապատասխան օրենսդրական դաշտի վրա: Անցումային դրույթները պետք է այնպես ձևակերպվեն, որ հնարավոր լինի փոփոխություններ մտցնել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 2000թ.-ի օրենքի և «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» 2001 թ.-ի օրենքի մեջ՝ չվտանգելով իրավական որոշակիությունը: Օրենքով պետք է կարգավորվեն հետևյալ խնդիրները՝

■ Լիցենզավորման գործընթացը և լիցենզիայի տարբեր մասերը,

- Լիցենզավորման խնդիրներով զբաղվող մարմնի կարգավիճակը և դերը (անկախությունը),
- Ծրագրերի ընտրության չափանիշները, որպեսզի բազմազանություն և բազմակարծություն ապահովվի,
- Ենթակառուցվածքային խնդիրներ(հասանելիություն և փոխկապակցվածություն),
- Շուկայի վրա Էական ազդեցություն ունեցող միջոցառումների հատուկ դերը՝ գերիշխող դիրքի չարաշահումից խուսափելու համար:

Եզրակացություններ և առաջարկություններ

- Հայեցակարգը լավ խնդիրներ և նպատակներ է դնում, որոնք պետք է առաջ տարվեն, սակայն շատ քիչ բան է ասվում այն մասին, թե դա ինչպես պիտի արվի: Քանի որ ռազմավարության մշակման գործընթացը սկսել է մի քանի տարի առաջ, ժամանակն է որ արդեն ավելի շատ մանրամասներ հայտնի լինեն:
- Հայեցակարգում հռչակված նպատակները լավն են, քանի որ դրանք շեշտում են ինչպես առավելագույն մատչելիությունը, այնպես էլ ազատ մրցակցությունը: Հայեցակարգում հայտարարվում է նաև գրաքննության բացառման և խմբագրական ազատության մասին:
- Հայեցակարգում նշված է ցանցերին հասանելիության և նմանատիպ այլ խնդիրների կարևորության մասին, սակայն դրանց հետ կապված մանրամասները շատ քիչ են:
- Նշված է մասնավոր և հանրային հեռարձակողների հավասարակշռված գոյակցությունը, որին պետք է հասնել ռազմավարության բովանդակության միջոցով:
- Թվայնացման ռազմավարությունը պետք է մշակվի և ընդունվի ոչ թե բիզնեսի և կառավարության դռնփակ բանակցությունների արդյունքում, այլ լինի հանրային լայն քննարկումների առարկա, որպեսզի երաշխավորվի հեռարձակման ծառայությունների բազմազանությունը, իսկ հանրությունը զանազան բարձրակ ծրագրերի ավելի մեծ ընտրություն ունենա: Հեռարձակողների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և անհատների հետ խորհրդակցությունները պետք է իրականացվեն միջազգայնորեն ընդունված ուղեցույցների համաձայն:
- Նախընտրելի է, որ ընդունված ռազմավարությունը բերի խորհրդարանի կողմից նոր օրենքների ընդունման, այլ ոչ թե կառավարության որոշումների կամ նախագահի հրամանագրերի:
- Կառավարությունը պետք է թափանցիկ լինի թվային դիվիզենտի հետ կապված երկարատև գործընթացներում, որոնց արդյունքում հաճախականության տիրույթի որոշակի մասերը հատկացվում են հեռահաղորդակցության տարբեր ծառայությունների համար: Կոնվերգենցիայի և այլ տեխնոլոգիաների, ինչպես նաև թվային

դիվիդենտից առավելագույնս օգտվելու մասին դրույթները հայեցակարգում թույլ են:

- Հայեցակարգում պետք է հստակ ընտրվի առկա տեխնիկական ստանդարտներից որևէ մեկը, ամենայն հավանականությամբ՝ MPEG 4-ը:
- Հայեցակարգում խոսվում է ռեգիոնալ մոտեցման մասին, ինչը լավ է, սակայն դա պետք է ավելի մանրամասն ներկայացվի և հստակեցվի:
- Ապակոդավորման սարքավորումներ ձեռքբերելու համար աջակցությունը կարևոր խնդիր է, քանի որ արբանյակային և մալուխային հեռարձակման ծառայություններից քիչ մարդիկ են օգտվում, և դա պետք է գործնականում հաշվի առնվի, որպեսզի անալոգային հեռարձակման դադարեցումից հետո բնակչությունը չզրկվի հեռարձակվող ծառայություններից: Այն դեպքերում, երբ ապակոդավորման սարքերի ձեռքբերումը մեծ ֆինանսական բեռ է հանդիսանում հեռուստադիտողների համար, կառավարությունը պետք է դիտարկի դրանց գնումը սուբսիդավորելու հնարավորությունը: Անհրաժեշտ է համապատասխան աշխատանքներ կատարել և դրանց արդյունքում սահմանել, թե ով է ստանալու ընդունիչ սարքեր ձեռքբերելու համար օգնություն և ինչպես է դա արվելու: Այդ աշխատանքը պետք է դիտվի որպես առաջնահերթ կարևորության խնդիր: Անհրաժեշտ է նաև հարակից ուսումնասիրություններ կատարել (օրինակ՝ պարզել, թե մարդիկ որքան են պատրաստ և ի վիճակի վճարել), որպեսզի հնարավոր լինի շարունակել աշխատանքը:
- Խորհուրդ է տրվում, որ ռադիոհեռարձակման թվային համակարգին անցումը մեկնարկի հեռուստատեսային թվային համակարգին անցումն ավարտելուց հետո միայն:
- Հայեցակարգում նշված է անկախ կարգավորող մարմնի աշխատանքը ծրագրերի ընտրության և այլ հարցերում, ինչը դրական է: Սակայն, Հայաստանի կարգավորող մարմինը՝ Ջեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, հզորացման կարիք ունի: Կարգավորող մարմինը պետք է սերտորեն ներգրավված լինի թվայնացման գործընթացի մեջ, կամ նույնիսկ ղեկավարի այդ գործընթացը, այդ թվում՝ դրան հետ կապված նախապատրաստական աշխատանքները:
- Մրցույթներ իրականացնող մարմինները (ինչպես նաև հեռահաղորդակցության ոլորտի կարգավորող մարմինը) պետք է մասնակցեն գործընթացին:

- Լիցենզավորման ռեժիմի անհրաժեշտ փոփոխություններն ընդունվում են, սակայն անհրաժեշտ է դրանք ավելի մանրամասնել՝ «Ջեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում և/կամ կարգավորող մարմնի կողմից: Այդ մանրամասները պետք է լինեն թափանցիկ, հստակ և օբյեկտիվ:
- Չայեցակարգում նշված է, որ համապատասխան չափանիշներ և իրավական կարգավորման դաշտ պետք է ձևավորվի մինչև 2010թ.-ի հուլիսի 20-ը, սակայն այնքան էլ պարզ չէ, թե իրավական կարգավորման մեջ կոնկրետ ինչը պետք է փոխվի: Վերջնաժամկետները պետք է իրատեսական լինեն: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հստակ ժամանակացույց ունենալ և խուսափել լրացուցիչ ձգձգումներից: Խնդիրն այլևս հրատապ է, ուստի անհրաժեշտ է խիստ ժամանակացույց սահմանել: Անհրաժեշտ է վերլուծել մինչ այժմ տեղի ունեցած ձգձգումների պատճառները, որպեսզի հետագայում հնարավոր լինի դրանցից խուսափել:
- Լիցենզիաները պետք է տրամադրվեն թափանցիկ, օբյեկտիվ և խտրականությունից զերծ ձևով և ողջամիտ ժամկետով: Չայեցակարգում այդ հարցին վերաբերվող հայտարարությունները լավն են, սակայն պետք է ավելի կոնկրետացվեն:
- Անհրաժեշտ է մանրամասնել թվայնացման համար մասնավոր հատվածի խրախուսման և պետական/հանրային ֆինանսական միջոցների օգտագործման մեխանիզմները:
- Եթե լիցենզավորման վճարի ներդրումը պետք է հետաձգվի անցումային շրջանում, ապա անհրաժեշտ է կիրառել ֆինանսական խրախուսման այլ մեխանիզմներ՝ Չայաստանի հանրային հեռարձակողի թվայնացման գործընթացը հեշտացնելու նպատակով:
- Կառավարությունը պետք է ենթադրի, որ ներկայումս գործող անալոգային բոլոր հեռարձակողները ստանալու են թվային ազդանշանների լիցենզիաներ: Կարիք չկա, որ այդ հեռարձակողները զրոյից սկսեն պաշտպանել եթերում լինելու իրենց իրավունքը: Պահպանելով արդեն իսկ գոյություն ունեցող լիցենզիաները, կառավարությունը պետք է փորձի նոր ձայներ բերել եթեր՝ լրացուցիչ ալիքների միջոցով:
- Թվային հեռուստատեսության կենտրոնացված հաղորդիչ ցանցերը պետք է համապատասխան պաշտպանիչ մեխանիզմներ ունենան, որպեսզի հաղորդիչ ցանցերը արդար ձևով և ողջամիտ գնով հասանելի լինեն բոլոր հեռարձակողների համար և որ դրանք չչարաշահվեն քաղաքական նպատակներով:

■ Կառավարությունը և հեռարձակողները պետք է անհապաղ սկսեն հանրության իրազեկման գործընթաց, որպեսզի հեռուստադիտողներին մատուցվող ծառայությունները չընդհատվեն մի համակարգիչ մյուսին անցման ժամանակ:

Ներածություն և մեթոդաբանության ներկայացում

Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ.-ի նոյեմբերի 12-ի N47 որոշմամբ: Վերլուծության է ենթարկվել այդ փաստաթղթի ոչ պաշտոնական անգլերեն թարգմանությունը, որը 2010 թ.-ի փետրվար ամսին փորձագետներին է ներկայացրել ԵԱՀԿ Երևանի գրասենյակը:

Հայեցակարգը վերլուծվել է Հայաստանի Հանրապետության՝ որպես ԵԱՀԿ-ի անդամ, միջազգային պարտավորությունների և թվային հեռարձակման անցնելու միջազգային չափանիշների և պրակտիկայի տեսակետից: Այս առումով, մենք հաշվի ենք առել այն փաստը, որ Հայեցակարգի ներածության մեջ նշվում է Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2003)9 երաշխավորությունը, որը վերաբերվում է թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական նշանակությունը խթանելու միջոցներին:

Հաշվի են առնվել նաև ռադիոհեռուստատեսության հեռարձակման թվային համակարգին անցման գործողությունների ծրագրի նախագծի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունների և լրացումների նախագծի տարբեր վերլուծություններ, որոնք կատարել են ԵԱՀԿ փորձագետ պրոֆեսոր Զեթրին Նայման-Մետկալֆը և պրոֆեսոր Անդրեյ Ռիխտերը, 2006-2009 թթ.-ին:.

Հեղինակները ղեկավարվել են նաև մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի կողմից նրանց պատվիրված զեկույցով:¹ ՉԼՄ-ների ազատության տեսանկյունից, թվային հեռուստատեսության տեխնոլոգիաները լսարանին՝ հեռարձակման միջոցով, ավելի շատ տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու և ստանալու հնարավորություն են տալու: Դրանք նաև կարող են տեղեկատվություն տարածելու ավելի մեծ հնարավորություններ տալ հեռարձակողներին: Սակայն, ինչպես նշված է վերոհիշյալ զեկույցում, հեռուստահեռարձակման թվային համակարգին անցումը կարող է առաջ բերել որոշ բացասական ազդեցության ռիսկեր, եթե կառավարությունները և կարգավորող մարմինները հաշվի չառնեն որոշ կանոններ ու սկզբունքներ: Այդպիսի ռիսկերից է՝ պետական և այլ մարմինների կողմից ՉԼՄ-ների շուկայի հետագա մենաշնորհացման, ՉԼՄ-ներում բազմակարծության նվազեցման, մշակութային և լեզվական բազմազանության ու միջազգային տեղեկատվության ազատ հոսքի առջև նոր խոչընդոտների ռիսկերը:

Չեկույցի մեջ նշված է, որ թվային հեռարձակման ժամանակաշրջանում էլ ավելի է բարձրանում գովազդից զերծ հանրային հեռարձակողի դերը: Ավելին, թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս ընդլայնել հանրային ծրագրերի շրջանակը:

¹ Զեթրին Նայման-Մետկալֆ և Անդրեյ Ռիխտեր/ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ, 2010: Տես՝ http://www.osce.org/documents/rfm/2010/03/42898_en.pdf (pdf) կամ http://www.osce.org/documents/html/pdftohtml/42898_en.pdf.html (html)

Այստեղ կարևոր է ոչ թե ալիքների մեծաթիվ լինելը, այլ բազմակարծությունը: Ալիքների մեծաթիվ լինելն ինքնաբերաբար չի բերում տեղեկատվության մատչելիության և անհավասարությունների վերացման: Կարևոր է իրական բազմազանություն ունենալ: Հետևաբար առաջարկվում է, որ պարտադիր ներքին բազմակարծություն ունեցող հանրային հեռարձակող ունենալը պետք է լինի թվայնացման բարեփոխումների անբաժան մաս:

Այն երկրների համար, որոնք դեռ առաջին քայլերն են կատարում այդ գործընթացում, այն է՝ ընդունում են թվայնացման ծրագիր, ուղեցույցն առաջարկում է, որ ծրագրի նախագիծը պետք է բաց լինի հանրության, քաղաքացիական հասարակության և մասնագետների կողմից քննարկման համար:

Թվային հեռուստատեսությունն ի վիճակի է տեղեկատվական հասարակությունը հասցնել յուրաքանչյուր տուն: Հետևաբար, կարևոր է բացառել այդ գործընթացից դուրս մնալը և, մասնավորապես, անվճար ծառայություններից և համազգային հեռուստատեսային ծրագրերից դուրս մնալը:

Հեռարձակման թվային համակարգին անցումը կապված է մի շարք կարևոր խնդիրների հետ: Դրանք են՝

1. Տեխնիկական և հաճախականությունների տիրույթի հետ կապված հարցեր, որոնք պահանջում են միջազգային որոշումներ (ՀՄՄ, ԵՄ և այլն):
2. Հեռարձակման մատչելիություն, այսինքն՝ սոցիալական և տնտեսական խնդիրներ, թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ազդեցություն:
3. Թվայնացման գործընթացի ֆինանսավորում, որի մեջ մտնում են հեռարձակողների համար ֆինանսավորման և գովազդի շուկայի մասնատման հարցերը, հանրային հեռարձակողի ֆինանսավորումը, ենթակառուցվածքների ֆինանսավորումը և պետական աջակցությունը:
4. Ենթակառուցվածքային խնդիրներ, և ինչպես խուսափել մենաշնորհացումից, և ենթակառուցվածքների հասանելիության հարցեր:
5. Կարգավորման հետ կապված խնդիրներ, ինչպիսիք են՝ անցումը կարգավորող մարմնի համար, լիցենզավորումը (առանձին լիցենզիաներ հեռարձակման և ծրագրերի բովանդակության համար), լիցենզավորման գործընթացը (մրցույթներ, մրցույթների սառեցում, սկզբնական շրջանում հատուկ գործընթաց կամ ոչ), մրցույթի հետ կապված խնդիրներ:
6. Ծրագրեր՝ ծրագրերի ընտրություն, հատկապես՝ անվճար պլատֆորմի համար, որպեսզի ապահովվի բազմազանությունն ու բազմակարծությունը, սեփականության վերաբերյալ կանոններ, թվային միջավայրում բովանդակության վերաբերյալ կանոններ (անչափահասների պաշտպանություն, պաշտպանություն ատելության սերմանումից և այլն):
7. Հանրային հեռարձակողի դերը:
8. Այլ ծառայությունները և թվայնացումը (կոնվերգենցիայի հնարավորությունների օգտագործում):

Հատուկ ուշադրություն է դարձվում հեռարձակման համակարգին անցնելու գործընթացին: Դրա մեջ մտնում է աշխատանքը և՛ թվայնացման պլանի, և՛ օրենսդրության վրա:

Սույն վերլուծության մեջ շոշափվում են բոլոր այս կարևոր կետերը, և հայեցակարգը մեկնաբանվում է եվրոպական փորձի տեսանկյունից, մասնավորապես, հետևյալ ոլորտներում՝ լիցենզավորում և ներկայումս գործող հեռարձակողների և բովանդակության արտադրողների համար հասանելիություն, նոր թվային ալիքների հանրության համար հասանելիություն, կարգավորում (այդ թվում՝ իրավական դրույթներ), ինչպես նաև թվայնացման գործընթացի ժամանակացույց և ֆինանսավորում:

Հեղինակները վստահ չեն, թե սույն ուսումնասիրության առարկա դարձած հայեցակարգն ինչ առնչություն ունի ՀՀ կառավարության որոշմամբ նախկինում ընդունման ենթակա՝ թվային համակարգի ներդրման ծրագրի հետ: 2006 թ.-ին ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցչի խնդրանքով պրոֆեսոր Զեթրին Նայման-Մետկալֆի կողմից վերլուծված այդ փաստաթուղթը բավականին նման է սույն ուսումնասիրության առարկա հայեցակարգին: Չնայած, որ շատ տարիներ են պահանջվել, որ գործողությունների ծրագիրը վերածվի հայեցակարգի, այս փաստաթղթի մեջ պահպանվել են նախորդի թույլ կողմերից շատերը, ինչպես նաև մի շարք ոչ անհրաժեշտ տեղեկություններ (օրինակ՝ արտասահմանյան արտադրության քանի հեռուստացույց կա Հայաստանում)՝ հաշվի չառնելով ԵԱՀԿ-ի կողմից ֆինանսավորված վերլուծություններում տեղ գտած քննադատությունը և այն փաստը, որ փաստաթուղթն ի վերջո ավելի կարճ և ավելի ոչ հստակ է դարձել: Դա չի կարող չհիասթափեցնել փորձագետներին:

1. Նախապատմություն

Քանի որ ռադիոալիքներն ազգային սահմաններ չեն ճանաչում, ավելի քան մեկ դար առաջ սկիզբ են առել խորհրդակցություններ հաճախականությունների բաշխման վերաբերյալ, ինչը գլոբալ համագործակցության վաղ ձևերից է եղել: Այսօր այդ գործընթացը վերահսկում է Հեռահաղորդակցության միջազգային միությունը (ՀՄՄ), որը Շվեյցարիայի Ժնև քաղաքում գործող ՄԱԿ-ի կառույցներից մեկն է: 2006թ.-ին Եվրոպայի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի 104 երկրների պատվիրակներ հավաքվել են՝ աշխարհի իրենց մասերում հեռարձակման թվային համակարգի անցման մեծ պլան ծրագիր համար, որպեսզի այդ անցումը եթերային ալիքների մեջ խառնաշփոթ չառաջացնի: Հայաստանում վերագետնյա թվային հեռարձակման ներդրման գործող տեխնիկական ծրագրերը հիմնված են միջազգային համաձայնագրերի և, ամենից առաջ, GE-06 տարածաշրջանային համաձայնագրի վրա (Ժնև, 2006)² որը ազգային մարմինների կողմից

² Համաձայնագրի տեքստը տարբեր լեզուներով տեղադրված է ՀՄՄ-ի վեբ-կայքում <http://www.itu.int/md/R00-CR-CIR-0262/en> : GE-06 համաձայնագիրը հաշվի է առնում տարբեր երկրների 72761 պահանջներ Band III (174-230 MHz) տիրույթում DVB-T և T-DAB ծառայությունների և Bands IV/V (470-862 MHz) տիրույթում DVB-T ծառայությունների հեռարձակման համար: Ընդհանուր առմամբ, երկրներին հատկացվել են 3 T-DAB և 1 DVB-T «տարածման շերտեր» Band III տիրույթում և 7-8 DVB-T շերտեր Bands IV/V տիրույթում: Եվրոպայում, GE-06 համաձայնագիրը փոխարինում է գործող Ստոկհոլմ 1961 (ST-61) պլանը, որը

ստորագրված, ՄԱԿ-ում գրանցված և կատարման համար պարտադիր միջազգային պայմանագիր է: Այդ համաձայնագիրը խթան է հանդիսանում Եվրոպայում հեռարձակման թվային համակարգին անցնելու համար ազգային քաղաքականություն/ծրագրեր ընդունելու համար:

GE-06 համաձայնագրով նախատեսված է, որ 2015թ.-ի հունիսի 17-ից հետո Եվրոպայի բոլոր երկրներն այլևս պարտավոր չեն պաշտպանել հարևան երկրների անալոգային ծառայությունները և ազատ կարող են սկսել թվային ծառայությունների համար իրենց հատկացված հաճախականությունների օգտագործումը: Այդ ամսաթիվը չի երաշխավորում, որ անալոգային ծառայություններն այդ ժամկետից հետո անպայման դադարեցվելու են տվյալ երկրի ողջ տարածքում: Սակայն, քանի որ անալոգային ծառայությունները անհնար են դառնալու սահմանամերձ շրջաններում, դա խթան է հանդիսանալու, որ անալոգային ծառայությունները ամբողջությամբ դադարեցվեն:

Այս առումով, Հայաստանը պարտավոր է հետևել ՀՄՄ-ի պլանին և մտադրված է կատարել այդ համաձայնագիրը: Տարբեր նպատակների համար բաշխումը որոշվում է ՀՄՄ-ի կողմից, սակայն հաճախականությունների տրամադրումը տարբեր օգտագործողներին՝ ներքին խնդիր է: Նշված կարևոր խնդիրներից մեկն այն է, որ ուշադրություն պետք է դարձնել ոչ-հեռարձակող կազմակերպություններին և նրանց օգտագործած տիրույթին: Հայեցակարգում նշված չէ նաև այն, որ տեխնոլոգիաների կոնվերգենցիան կարող է նշանակել, որ նոր օգտագործողներ կարող են հետաքրքրված լինել նույն տիրույթով, ինչ թվային հեռարձակողները: Ավելին, թվայնացումը կարող է նաև այլ ծառայությունների օգտագործման համար հնարավորություններ ստեղծել: Չնայած, որ հայեցակարգն անդրադառնում է այդ երևույթին, այն քիչ մանրամասներ է պարունակում:

ՀՄՄ-ի ժամանակացույցը համապատասխանում է ԵՄ-ի առաջարկություններին: 2005թ.-ի մայիսին հրապարակված հաղորդագրության մեջ Եվրոպական Հանձնաժողովը անդամ պետություններին առաջարկել է վերգետնյա անալոգային հեռարձակումը աստիճանաբար դադարեցնել մինչև 2012թ.:

2010թ.-ի սկզբի դրությամբ, վեց եվրոպական երկրներ ամբողջությամբ անցել են վերգետնյա թվային հեռուստատեսության ծառայությունների և դադարեցրել են վերգետնյա անալոգային հեռարձակումը: Դրանք են՝ Գերմանիան, Դանիան, Ֆինլանդիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները և Շվեդիան: Անալոգային հեռարձակումն դադարեցվել է Ավստրիայի, Բելգիայի (Ֆլամանդական համայնքի), Չեխիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Միացյալ Թագավորության որոշ շրջաններում: Ավստրիայում, Մալտայում, Իսպանիայում և Սլովենիայում անալոգային հեռարձակումը պետք է ամբողջությամբ դադարեցվի 2010թ.-ին:

2009թ.-ին վերգետնյա թվային հեռուստատեսության ծառայություններ են մեկնարկել Լատվիայում, Լեհաստանում, Պորտուգալիայում և Սլովակիայում, իսկ 2010թ.-ին դրանք պետք է սկսեն նաև Բուլղարիայում, Էստոնիայում,

կարգավորում է հաճախականությունների օգտագործումը անալոգային հեռարձակման միջավայրում:

Իռլանդիայում և Ռումինիայում: 2009թ.-ին վերգետնյա թվային հեռուստատեսության վճարովի ծառայություններ են ներդրվել Գերմանիայում, Լատվիայում և Իսպանիայում:

Եվրոպական աուդիովիզուալ կենտրոնի (European Audiovisual Observatory) տվյալներով, 2009թ.-ի վերջին Եվրոպայում գործող 7200 հեռուստաալիքներից ավելի քան 730-ը հեռարձակվել են Եվրոպական վերգետնյա թվային հեռուստատեսության ցանցերով: Ավելի քան 300-ը դրանցից տեղական և շրջանային ալիքներ են: Համեմատության համար, 2009թ.-ի ապրիլին դրանց թիվը եղել է մոտ 500.³

Հայեցակարգում թվային հեռուստատեսությունը և թվային ռադիոն դիտարկվում են որպես մեկ փաթեթ, քանի որ շատ խնդիրներ նույնն են: Ընդհանուր առմամբ համարվում է, որ թվային հեռուստատեսության անցնելն ավելի մեծ ազդեցություն ունի հասարակության վրա: Սակայն, պետք է նշել, որ թվային ռադիոն ունի պրոբլեմներ, որոնք տարբերվում են թվային հեռուստատեսության պրոբլեմներից, օրինակ՝ անալոգային ռադիոընդունիչները հաճախ շատ էժան են, մարդկանց մոտ այդ ընդունիչների թիվը մեծ է, ծրագրերը շատ են, իսկ ավելի թանկ թվային ընդունիչների նկատմամբ հետաքրքրությունը քիչ է: Բացի այդ, թվային ռադիոյի միջոցով հաճախականությունների ազատումը ավելի քիչ կարևոր է: Օրինակ՝ Ֆրանսիայում վերգետնյա թվային ռադիոյի հեռարձակումը սկսելու է միայն 2010թ.-ին և միայն մոտ 30 տոկոս բնակչություն ունեցող վայրերում: Այստեղ դա համարվում է լրացուցիչ թվային ծառայություն: Հայեցակարգում նշված այն գաղափարը, որ ռադիոյի թվայնացումը պետք է տեղի ունենա հեռուստատեսության թվայնացումն ավարտելուց հետո, ընդունելի է և համապատասխանում է միջազգային չափանիշներին:

2. Հեռարձակման հասանելիություն

Ընդունիչ սարքեր

Թվայնացումը բազմաթիվ օգուտներ է բերում ինչպես լսարանի, այնպես էլ հեռարձակողների համար, քանի որ այն թույլ է տալիս ավելի մեծ քանակությամբ տեղեկատվություն տեղավորել ռադիոհաճախականությունների տիրույթում: Հայեցակարգում նշված են թվայնացման օգուտները հաղորդակցության ոլորտում ազատ մրցակցության, ինչպես նաև այդ ոլորտի զարգացման համար: Հայեցակարգում գրված է, որ Հայաստանում թվայնացման նպատակներից են՝ լայն հասանելիությունը և մատչելիությունը, ինչը դրական է: Սակայն այդ դրական ազդեցություններին հասնելու համար գոյություն ունեն որոշակի հնարավոր խոչընդոտներ: Այդ հնարավոր խոչընդոտները վերաբերվում են ինչպես լսարանին, այնպես էլ հեռարձակողներին: Լսարանի համար հիմնական հնարավոր խոչընդոտն այն է, որ թվայնացման օգուտներից օգտվելու համար անհրաժեշտ են հատուկ սարքավորումներ, որոնց միջոցով հնարավոր լինի ստանալ հեռարձակումը: Մալուխի, արբանյակի կամ լայնաշերտ կապի միջոցով

³ Տես՝ http://www.obs.coe.int/about/oea/pr/mavise_end2009.html

հեռարձակումներ ստացող մարդիկ սովորաբար որևէ բան չպետք է փոխեն: Բոլոր անհրաժեշտ փոփոխությունները կատարելու են ծառայություն մատուցողները: Սակայն վերագետնյա հեռուստատեսության հեռուստադիտողները պետք է նոր սարքավորումներ ձեռքբերեն: Հայեցակարգում գրված է, որ Հայաստանում մալուխային և արբանյակային ծառայությունների տարածման մակարդակը ցածր է, ուստի ապակողավորման սարքերի հարցը կարևոր է լինելու: Դա նշվել է նաև նախորդ ռազմավարության մեջ, և խնդրի կարևորությունը շեշտվել է նախորդ ծրագրին վերաբերող մեկնաբանություններում, սակայն պարզ չէ, թե այդ առումով ինչ զարգացումներ են տեղի ունեցել այս ընթացքում:

Հայեցակարգով նախատեսված խնդիրներից է՝ «մինչև անալոգային հեռարձակման վերջնական դադարեցումը ՀՀ անապահով քաղաքացիների և խոցելի խմբերի համար թվային հեռարձակմամբ հեռուստառադիոծրագրերի ընդունման և ապակողավորման սարքավորումների ապահովումը»: Դա արժեքավոր և կարևոր խնդիր է (ենթադրելով, որ այն վերաբերվում է ապակողավորման համար անհրաժեշտ հատուկ սարքավորումներին): Անհրաժեշտ է աշխատանք տանել և սահմանել, թե ով է մտնում այդ նկարագրության մեջ և ինչպես ու ում կողմից են ընտրվելու այն մարդիկ, ովքեր ստանալու են նշված աջակցությունը: Այդ աշխատանքը պետք է դիտվի որպես առաջնահերթ խնդիր: Դա կարևոր է նաև այդ միջոցառման ծախսերը հաշվարկելու համար: Փաստաթղթում նաև նշվում է, որ անհրաժեշտ է ուսումնասիրություն կատարել առ այն, թե մարդիկ որքան են պատրաստ և ի վիճակի վճարել: Զանի որ այդպիսի ուսումնասիրությունը նախապայման է հանդիսանում այլ որոշումների և ծրագրերի համար, այն պետք է իրականացվի որպես առաջնահերթ խնդիր: Անվճար կամ սուբսիդավորված կցորդների բաժանման չափանիշները և համակարգը կարող են բարդ լինել, և հավանական է, որ այս ամենը կազմակերպելու համար լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք լինի: Սոցիալական ապահովության սովորական կանոնները կարող են աջակցությունից օգտվողներին որոշելու լավագույն կամ ամենահարմար միջոցը չլինել: Կարևոր է, որ հեռարձակման թվային համակարգին անցնելու ժամանակ մարդիկ չզրկվեն հեռարձակման ծառայություններից: Այն երկրները, որտեղ թվայնացումը տեղի է ունեցել շուտ, օրինակ՝ Ֆինլանդիան և Շվեդիան, անվճար կցորդներ չեն տրամադրել: Դրա փոխարեն, այդ երկրները խրախուսել են, որ արտադրողները պատրաստեն կցորդների զանազան տարբերակներ՝ տարբեր գներով, ինչը համապատասխանում է ԵՄ-ի քաղաքականությանը (խրախուսելով առավելագույն փոխգործակցելիություն): Այնուամենայնիվ, այս խնդիրն ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ երկրի սոցիալ-տնտեսական պայմանները:

Անալոգային հեռարձակման դադարեցում

Անալոգային հեռարձակումը չպետք է դադարեցվի այնքան ժամանակ, մինչև գրեթե ողջ բնակչությունը չկարողանա թվային հեռարձակմամբ ծրագրեր

ընդունել: Կարևոր է, որ հաշվի առնվի բնակչությունը և ոչ թե տարածքը: Հայեցակարգում դա ճիշտ է արված և այնտեղ նշված պահանջը տեղին է: Հայեցակարգում նշված է, որ անալոգային հեռարձակումը դադարեցնելուց առաջ անհրաժեշտ է, որ ողջ Հայաստանում գոյություն ունենա առնվազն մեկ մինիմալ սոցիալական մուլտիպլեքս: Դա լավ է, սակայն պետք է հիշել, որ մինևույն ժամանակ հեռարձակման անալոգային և թվային համակարգեր ունենալը թանկ է: Հետևաբար, այդ ժամանակահատվածը պետք է լինի հնարավորինս կարճ: Դրա համար ծածկույթի ցանկալի մակարդակին պետք է հասնել որքան հնարավոր է շուտ: Ընդունիչ սարքեր տրամադրելու կամ այդ հարցում աջակցելու աշխատանքները պետք է կատարվեն հեռարձակողների կողմից դեպի թվային հեռարձակում անցնելու աշխատանքներին զուգահեռ:

2006թ.-ի վերջին և 2007 սկզբին կատարված վերլուծության մեջ նշված է եղել, որ խիստ ժամանակացույց ունենալը լավ գաղափար է, սակայն ծրագրով առաջարկված ժամանակացույցը կարծես թե չափազանց լավատեսական էր Հայաստանի համար: Թվում է որ այդ պլանին չեն հետևել և միգուցե այժմյան ժամանակացույցն ավելի իրատեսական է: Անհրաժեշտ է վերլուծել նախորդ ծրագրերի ձգձգման պատճառները, որպեսզի հնարավոր լինի խուսափել նույն խոչընդոտներից: Շատ ճիշտ է, որ հայեցակարգում նկարագրվում է իրողությունը Հայաստանում և ներկայացվում են գործող հեռարձակողները և նրանց սփռումը: Դա ճիշտ մոտեցում է՝ հայաստանյան իրողության մեջ սփռման և մի համակարգից մյուսին անցման հետ կապված խնդիրները լուծելու համար: Միայն մի քանի ծրագրեր են սփռվում ողջ երկրի տարածքում, իսկ Երևանի և մարզերի միջև տարբերությունները մնում են բավականին մեծ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում գոյություն ունի մի հոդված, որը վերաբերվում է հեռուստատեսային հաղորդումներ ստանալու իրավունքին: Չնայած, որ դա ենթադրաբար ավելի շատ ընդհանուր սկզբունք է, կարևոր է անել այնպես, որ տեխնիկական զարգացումները հաղորդումներ ստանալն այնքան չդժվարացնեն, որ դա բերի օրենքով նախատեսված այդ իրավունքի խախտման: Այդ համատեքստում միգուցե անհրաժեշտ է որոշ ձևակերպումներ մտցնել թվային հեռարձակման մասին, չնայած որ ընդունիչ սարքերի հետ կապված աջակցության մասին կանոններն ավելի հարմար է ներառել հատուկ կանոնակարգերում կամ անցումային դրույթներում, քան բուն օրենքում:

Տեխնիկական ստանդարտներ

Ինչ վերաբերում է տեխնոլոգիաներին, հայեցակարգում նկարագրված են տարբեր MPEG ստանդարտները, սկսած MPEG 2-ից մինչև փորձարարական MPEG 12-ը: Սակայն, ռազմավարության մեջ անհրաժեշտ է ընտրել մեկը: Այն երկրները, որտեղ թվայնացումը շուտ է տեղի ունեցել (օրինակ՝ Ֆինլանդիան և Շվեդիան) ընտրել են MPEG 2 ստանդարտը: Սակայն, քանի որ տեխնոլոգիաները շատ արագ են զարգանում, եվրոպական մյուս երկրներից շատերը որոշել են ընդունել միանգամից MPEG 4 ստանդարտը: MPEG 4-ը թույլ է տալիս օգտագործել MPEG

2-ի համար նախատեսված սարքավորումները, բայց ոչ հակառակը: Դա նշանակում է, որ, եթե մարդիկ արդեն ունեն սարքավորումներ, ապա ավելի նոր ստանդարտին անցնելը դժվար է լինելու, քանի որ դա հեռուստադիտողներից լրացուցիչ ծախսեր է պահանջելու: Սակայն, եթե ընդհանրապես որևէ թվային սարքավորումներ ունեցող հեռուստադիտողների թիվը փոքր է և դրանք շուկայում տարածված չեն, ապա իմաստ ունի անմիջապես ընտրել ավելի նոր ստանդարտ: Մյուս կողմից, իմաստ չունի ընտրել ավելի առաջադեմ ստանդարտ, քան ընդունված է տարածաշրջանում, քանի որ առանձին ստանդարտ միայնակ օգտագործելը թանկ է և բարդ, որովհետև դա փոքրացնում է ընդունիչ սարքերի շուկան, ինչն իր հերթին կարող է բարձրացնել դրանք գինը և սահմանափակել մատչելիությունը:

Յատուկ կարիքներ

Յատուկ կարիքներ ունեցող մարդիկ կարող են բազմաթիվ օգուտներ ստանալ թվայնացումից, քանի որ նրանք կարող են ոչ միայն ավելի մեծ թվով ծրագրեր ունենալ, այլ նաև ուրիշ ծառայություններից օգտվել: Յետևաբար, հատուկ կարիքներ (լսողության կամ տեսողության խանգարումներ, կամ շարժունակության հետ կապված խնդիրներ) ունեցող մարդիկ ավելի շատ օգնություն կարող են ստանալ այդ ծառայությունների շնորհիվ: Սակայն, դա ինքնըստիներքյան չի լինելու, այլ պահանջելու է լավ մտածված քաղաքականություն, և դա պետք է ծրագրի մի մաս կազմի:

ՉԼՄ-ների վերաբերյալ ԵԽ-ի փաստաթղթերը

ԵԽ-ն մի շարք փաստաթղթեր է ընդունել ՉԼՄ-ների վերաբերյալ, որոնք կամ ուղղակիորեն անդրադառնում են ՉԼՄ-ների համար թվայնացման գործընթացի օգուտներին և փոփոխություններին, կամ շեշտում են այն ընդհանուր խնդիրները, որոնք պետք է հաշվի առնվեն թվայնացման գործընթացի ժամանակ: Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵԽ նախարարների կոմիտեի (2003)⁹ երաշխավորությունը պահանջում է, որ անդամ պետությունները «թվային հեռարձակման զարգացման համար համապատասխան իրավական և տնտեսական պայմաններ ստեղծեն»: Երաշխավորության մեջ նշված է, որ անդամ պետությունները պետք է լավ մշակված ռազմավարություններ ընդունեն, որպեսզի հեռարձակման թվային համակարգին անցումը լինի լավ մտածված: Այդպիսի ռազմավարությունը պետք է խրախուսի օպերատորների միջև համագործակցությունը, պլատֆորմների օգտագործման համաձայնեցվածությունը, ապակողմավորման սարքերը փոխգործակցությունը, բազմազան բովանդակության մատչելիությունը և թվայնացման արդյունքում ստեղծված հնարավորությունների ճիշտ օգտագործումը: ՉԼՄ-ներում բազմակարծությունը թվայնացման կարևոր նպատակներից է:

Ընդհանուր փաստաթղթերից է՝ *«ՉԼՄ-ների կոնցենտրացիայի համատեքստում ժողովրդավարության մեջ ՉԼՄ-ների դերի պաշտպանության մասին հռչակագիրը*

և ՉԼՄ-ների բազմակարծության և բովանդակության բազմազանության մասին երաշխավորությունը» (Նախարարների կոմիտե, 31 հունվարի, 2007թ.): Չռչակագրում խոսվում է ՉԼՄ-ների հսկողության և քաղաքական իշխանության տարանջատման մասին և շեշտվում է կարգավորման պատշաճ մեխանիզմների միջոցով ՉԼՄ-ների սեփականության թափանցիկության կարևորությունը: Պատշաճ ձևով ֆինանսավորված և սարքավորումներով հագեցած հանրային հեռարձակողը կարող է հակակշռել ՉԼՄ-ների կոնցենտրացիայի բացասական հետևանքները: Երաշխավորության մեջ վերահաստատվում է, որ ՉԼՄ-ները չափազանց կարևոր են ժողովրդավարական հասարակության գործունեության համար, քանի որ դրանք նպաստում են հանրային բանավեճերին, քաղաքական բազմակարծությանը և տարբեր կարծիքների մասին տեղեկատվության մատչելիությանը: Այս հռչակագիրը և երաշխավորությունը կարևոր են թվայնացման գործընթացի ժամանակ, քանի որ, գոնե սկզբնական շրջանում, գոյություն ունի ավելի մեծ կոնցենտրացիայի ռիսկ՝ հաշվի առնելով այն մեծ ծախսերը, որ հեռարձակողները պետք է կատարեն թվայնացման համար:

Նախարարների կոմիտեի R(99)1 երաշխավորությունը նվիրված է հենց հեռարձակման կոնցենտրացիայի խնդրին, որը կարող է վտանգել բազմակարծությունը ՉԼՄ-ներում: Երաշխավորության մեջ առաջարկվում են մի շարք միջոցներ, օրինակ՝ շուկայի կոնցենտրացիայի դեմ քայլեր ձեռնարկելու իրավունք ունեցող հատուկ մարմինների ստեղծում: (2003)1 երաշխավորությամբ ԵՏ անդամ պետություններին կոչ է արվում ՉԼՄ-ների սեփականության կոնցենտրացիայի դեմ կանոններ մշակել: ԵՏ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 1636 (2008) երաշխավորության մեջ ՉԼՄ-ների սեփականության և ՉԼՄ-ների նկատմամբ տնտեսական ազդեցության թափանցիկությունը համարվում է ժողովրդավարական հասարակությունում ՉԼՄ-ների համար չափորոշիչներից մեկը:

Ինչ վերաբերում է կոնկրետ Հայաստանին, 2008թ.-ի հուլիսին ընդունված 1620 (2008) երաշխավորության մեջ ԵԽԽՎ-ն Հայաստանում կոչ է արել «ապահովել լիցենզավորման բաց, արդար և թափանցիկ ընթացակարգ»: ԵԽԽՎ-ի այդ կոչը պայմանավորված է, ի թիվս այլ բաների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից մեկով, որը բավարարել է կառավարությունը քննադատող անկախ մի հեռուստաընկերության հայցը, ընկերություն, որը 2002թ.-ին խնդրահարույց պայմաններում զրկվել է լիցենզիայից: Այդ գործով որոշման մեջ մտահոգություն էր հայտնվել Հայաստանում լիցենզավորման գործընթացի վերաբերյալ, սակայն որոշման ընդունումից հետո անցած տարիների ընթացքում այդ մտահոգություններին պատշաճ ձևով չեն անդրադարձել:

3. Թվայնացման գործընթացի ֆինանսավորումը

Թվայնացման գործընթացի ֆինանսավորումը մեծ խնդիր է լինելու հեռարձակողների և կառավարության համար, հատկապես այսօր՝ տնտեսական

անկման ժամանակ: Ինքնուրույն հեռարձակելու կարողություն ունեցող լիարժեք թվային կայան լինելը նշանակում է, որ անհրաժեշտ է ձեռքբերել կամ վարձել նոր հաղորդիչ, հատուկ մալուխներ՝ ազդանշանները հաղորդելու համար, բարդ համակարգչային սարքավորումներ և այլն:

Բրիտանիայում ավելի քան 1150 հաղորդիչների թվայնացումը, որը դեռ չի ավարտվել, արժենալու է մոտ 500 միլիոն ֆունտ ստերլինգ: ԱՄՆ-ի հեռարձակողների ազգային ընկերակցության տվյալներով, ԱՄՆ-ի մոտ 1750 լրիվ հզորությամբ կայանների ենթակառուցվածքների թվայնացման համար պահանջվել է 5 միլիարդ ԱՄՆ դոլար: Առևտրային/մասնավոր կայաններն իրենք են վճարել թվայնացման համար, իսկ հանրայինները դրամաշնորհ են ստացել Ջանրային հեռարձակման կորպորացիայից, որը ֆինանսավորվում է ֆեդերալ բյուջեից, և 50 նահանգների կառավարություններից:

Թվայնացման ֆինանսական բեռը կարող է հատկապես ծանր լինել թույլ ազդանշաններ հաղորդող հատուկ կատեգորիաների կայանների համար: Ցածր հզորությամբ այս կայաններից շատերն ուրույն ծրագրեր են հեռարձակում քաղաքի կամ գյուղի շատ փոքր տարածքներում: Ցածր հզորությամբ կայանները հատկապես շատ են Միացյալ Նահանգներում, որտեղ նրանք թիվը կազմում է մոտ 2800: Այնտեղ որոշվել է թույլ տալ, որ նրանք շարունակեն հեռարձակել անալոգային համակարգում, որպեսզի ֆինանսական բեռը թեթևանա: Ազդանշանի ճարտարագիտության տեսանկյունից որոշումը ճիշտ է եղել, որովհետև դրանց ազդանշանները հեռու չեն սփռվում և հաստատ չեն հատում ազգային սահմանները: ԱՄՆ-ի լիարժեք կայաններ, իհարկե, նման բացառություն չեն ստացել, սակայն նրանցից ընդամենը մի քանիսն են փակվել:⁴

Հայաստանում հեռարձակման թվային համակարգին անցման ազդեցությունը կարող է շատ ավելի ուժեղ լինել, քանի որ ընկերություններից շատերի գովազդային բազան թույլ է և կապիտալ ծախսերը հոգալու համար նրանք չեն կարող դիմել պետությանը կամ ներդրողներին: Այդ պատճառով, փակման վտանգի առաջ կարող են կանգնել հիմնականում փոքր և մասնավոր ընկերությունները, այսինքն՝ նրանք, ովքեր և ապահովում են հեռարձակման բազմազանությունը և տեղական լուսաբանումը, լինի դա խիզախ ռեպորտաժների կամ էթնիկական երաժշտության տեսքով, որոնք չկան խոշոր հեռարձակողների ծրագրերում:

Կառավարությունը կարող է խրախուսման տարբեր միջոցներ առաջարկել և կիրառել՝ անցման գործընթացը հեռարձակողների համար հեշտացնելու նպատակով: Հայեցակարգի Մաս VIII-ում գրված է՝ «Նկատի ունենալով թվային անցման ֆինանսական ներդրումների վերադարձման անհրաժեշտությունը, նախատեսվում է ի համեմատ անալոգայինի՝ երկարացնել տրամադրված թվային հեռարձակման լիցենզիաների գործողության ժամկետները»: Մենք այս դրույթը հասկանում ենք որպես նշան, որ մասնավոր հեռարձակողների լիցենզիաների գործողության ժամկետները լինելու են ավելի երկար, քան այսօր, եթե նրանք

⁴ Տես՝ Տես՝ Ջոն Բուրգես. «Անշատում. Հեռարձակման թվային համակարգին անցնելու մարտահրավերները», զեկույց Մամուլին միջազգային աշակցության կենտրոնի համար, 19 Նոյեմբերի, 2009, Վաշինգտոն, Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, 2009, էջ 18:

թվային հեռարձակման անցնեն: Այլ կերպ ասած, թվային հեռարձակման լիցենզիաները տրվելու են բավականաչափ երկար ժամկետով, որպեսզի լիցենզավորված ընկերությունները իրենց վստահ զգան և անհրաժեշտ ներդրումներ կատարեն: Այդ առումով, Ֆրանսիան կարող է լավ օրինակ ծառայել: Այնտեղ, անալոգայինից դեպի թվային հեռուստատեսություն անցնելու մտադրություն ունեցող հեռարձակողների լիցենզիայի ժամկետը երկարացվում է այսօրվա 15 տարուց մինչև 30 տարի (եթե ընկերության ծածկույթը հասնում է ողջ երկրի բնակչության 95 տոկոսին և ավելին): Բացի այդ, վերգետնյա թվային հեռուստատեսության համակարգին անցնող յուրաքանչյուր հեռարձակող ստանում է նոր ծառայության թույլտվություն (մինչև 7 այդպիսի թույլտվություններ) ու ևս մի թույլտվություն, երբ ամբողջությամբ դադարեցնում է անալոգային հեռարձակումը՝ համաձայն նախապես մշակված ժամանակացույցի:⁵

Չնայած որ թվայնացման նախնական ներդրումային ծախսերը մեծ են, դրանց վերադարձը կարող է տեղի ունենալ որոշ ժամանակ անց՝ *թվային դիվիդենտի* տեսքով: Թվային դիվիդենտը անալոգայինից դեպի թվային վերգետնյա հեռուստատեսություն անցնելու արդյունքում ազատված հաճախականությունների աննախադեպ թիվն է: Շարժական լայնաշերտ կապի, հեռարձակման և տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտների միջև հաճախականությունների արդար և հավասարակշռված վերաբաշխումը հասարակությանը թույլ կտա օգտվելու թվային դիվիդենտի բոլոր սոցիալական և տնտեսական բարիքներից:

Հայեցակարգում շատ ճիշտ ձևով նշված է. «Թվային հեռարձակման համակարգերի մյուս կարևոր առավելությունը առաջանում է հաճախականությունների ռեսուրսային տիրույթի մի մասի ազատումից, ինչը հնարավորություն է տալիս ներդնել այլ ծառայություններ՝ ինչպես բջջային կապը և վերգետնյա հեռարձակումը» (Մաս VIII): Ազատված տիրույթի հետագա օգտագործման եղանակները պետք է նախանշվեն որքան հնարավոր է շուտ, քանի որ տիրույթի հնարավոր գնորդների ներդրումները նույնպես կարող են օգտագործվել թվայնացման գործընթացն այսօր ֆինանսավորելու համար: Դա նույնիսկ ավելի կարևոր է, եթե ակնկալվում է «արտասահմանյան ներդրողների հոսք», ինչպես նշված է հայեցակարգի Մաս VIII-ում:

Թվային դիվիդենտի մասին խոսելիս, անհրաժեշտ է հիշատակել Եվրոպական Հանձնաժողովի փաստաթղթերից մեկը, որը վերնագրված է՝ «Եվրոպայում թվային դիվիդենտի հնարավորությունների վերափոխումը սոցիալական օգուտների և տնտեսական աճի»: Այն հրապարակվել է 2009թ.-ի հուլիսի 10-ին, տեղեկատվության հասարակության և ՉԼՄ-ների հարցերով գլխավոր տնօրինության կողմից:⁶ Փաստաթղթում առաջարկվում է սահմանել այն ընդհանուր տիրույթները, որոնք կարելի է օպտիմալացնել՝ հաղորդակցության

⁵ Աուդիովիզուալ գերագույն խորհրդի հեռուստատեսության բաժնի ղեկավար Թիերի Վաչեի պրեզենտացիան, Կիև, 19 փետրվարի, 2010

⁶ Տես՝

http://ec.europa.eu/information_society/policy/ecomm/radio_spectrum/document_storage/consultation/s/2009_digitaldividend/2009_0710_0904_digitaldividendconsultation.pdf

նմանատիպ ցանցեր օգտագործող ծառայությունները «խրոցերի» մեջ հավաքելու միջոցով (հեռարձակում, շարժական մուլտիմեդիա և շարժական լայնաշերտ կապ): Այս տիրույթները ինչ-որ մի ձևով պլանավորվելու և համաձայնեցվելու են ԵՄ մակարդակով:

Ազգային մակարդակով, թե ինչպես է, օրինակ, Միացյալ Թագավորության կառավարությունը քննարկում Մեծ Բրիտանիայում թվային դիվիդենտի հետագա օգտագործումը, կարելի է տեսնել Թվային դիվիդենտի ուսումնասիրություն ծրագրի միջոցով: Դա մի ծրագիր է, որով թվայնացման արդյունքում ազատված տիրույթը հատկացվում է նոր օգտագործման համար:⁷ Այս առումով, կարևոր միտում է՝ խորհրդակցությունների և սեմինարների միջոցով հանրության և բիզնեսի մասնակցությունը քննարկումներին և որոշումներ կայացնելու գործընթացներին: Խորհրդակցությունները կառավարության առաջարկությունների կարևոր մասն են կազմում: Այդ առաջարկությունների վերաբերյալ բազմաթիվ շահագրգիռ կողմեր ներկայացրել են ավելի քան 750 տարբեր արձագանքներ, որոնք բազմաթիվ տարբեր տեսակետներ են պարունակում:⁸

Այդ գործընթացի արդյունքում որոշվել է, որ Միացյալ Թագավորությունում ազատված տիրույթը պետք է հանվի աճուրդի: Դա պայմանավորված է այն տեսակետով, որ աճուրդը տիրույթի օգտագործման իրավունքներ տրամադրելու ամենաարդար և ամենաթափանցիկ ձևն է, և որ շուկայական մեխանիզմները տիրույթի արդյունավետ օգտագործումը խրախուսելու ամենաարդյունավետ միջոցներն են: Ուստի, անհրաժեշտ է կիրառել հենց այդ շուկայական մեխանիզմները, եթե չկան դա չանելու հիմնավոր պատճառներ: Քանի որ աճուրդն անցկացվելու է հանրային (պետական) մարմնի կողմից, դրանից ստացած հասույթը մտնելու է պետական բյուջե: Դրանով կարելի է վերադարձնել թվայնացման ֆինանսավորման գործում պետության ներդրումը, որը սովորաբար անհրաժեշտ է լինում և նախատեսված է հայեցակարգում:

Մասնավոր և պետական ներդրումների համակցությունը սկզբունքորեն ճիշտ է, սակայն մասնավոր ընկերությունների ներդրումները խրախուսելու մեխանիզմները շատ հստակ չեն: Անհրաժեշտ է զգույշ լինել, որ որոշ ընկերություններ անտեղի առավելություններ չստանան: Անհրաժեշտ է նաև խուսափել հանրային կամ մասնավոր ընկերությունների կողմից շուկայի մենաշնորհացումից: Հաղորդիչների ցանցի սեփականաշնորհումը (թվայնացման ֆինանսավորման ևս մի կարևոր միջոց), թվայնացման պատճառով չպետք է հետաձգվի: Հաղորդիչների ցանցի ցանկացած սեփականատեր պետք է հետևի հասանելիության կանոններին և չազդի հեռարձակման բովանդակության կամ հեռարձակվող ալիքների ընտրության վրա:

Հայեցակարգը պետք է ուրվագծի Հայաստանում թվային դիվիդենտի արդյունավետ օգտագործումը՝ օգտագործելով եվրոպական լավ օրինակներ:

⁷ Տես՝ <http://www.ofcom.org.uk/radiocomms/ddr/>

⁸ Տես՝ <http://www.ofcom.org.uk/consult/condocs/ddr/statement/>

Մասնավոր ընկերությունների կողմից և պետությունից ակնկալվող ֆինանսական ներդրումների հարաբերակցությունը կախված է շուկայի հնարավորություններից և տվյալ երկրի հարստության մակարդակից: Այս առումով երկու հակառակ մոտեցումներ տեսնելու համար առաջարկում ենք համեմատել Ռուսաստանը (հիմնականում պետական ներդրումներ) և Ուկրաինան (որտեղ ակնկալվում են մեծածավալ մասնավոր ներդրումներ) (Տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հեռարձակման թվային համակարգին անցնելու ծախսերը 2009-2015թթ. (պլանավորված)⁹

	Հանրային/պետական միջոցներ (միլիոն եվրո)	Մասնավոր ներդրումներ (միլիոն եվրո)	Ընդամենը (միլիոն եվրո)
Ռուսաստան	1 716	1 036	2 752
Ուկրաինա	0.76	364.24	365

Եվրոպայի մեծ մասում ընդունում են, որ հեռարձակման թվային համակարգին անցնելու գործընթացին անհրաժեշտ է պետական ֆինանսական աջակցություն: Եվրոպական Հանձնաժողովը գիտակցում է, որ անցումը կարող է ձգձգվել, եթե ամբողջությամբ թողնվի շուկայական ուժերին: Այն գիտակցում է նաև, որ պետական միջամտությունը կանոնակարգման, սպառողներին ֆինանսական աջակցության, տեղեկատվական արշավների կամ սուբսիդիաների տեսքով կարող է օգտակար լինել՝ շուկայի կոնկրետ ձախողումները հաղթահարելու, սոցիալական կամ ռեգիոնալ համախմբվածությունն ապահովելու առումով: ԵՄ անդամ պետությունները պետք է ցույց տան, որ աջակցությունն ամենահարմար գործիքն է, այն չի գերազանցում խիստ անհրաժեշտ նվազագույն սահմանները և անտեղի չի աղավաղում մրցակցությունը: Հեռարձակման թվային համակարգին անցնելու ճանապարհին պետական աջակցության ընդունելի ձևերը կարող են լինել այսպիսին՝

- Անբավարար սփռում ունեցով տարածքներում հաղորդացանցի ներդրման ֆինանսավորում,
- հանրային հեռարձակողին ֆինանսական փոխհատուցման տրամադրում, որպեսզի նա կարողանա թվային ազդանշաններ հասցնել ողջ բնակչությանը,
- թվային ապակողավորման սարքեր (և ոչ թե թվային հեռուստացույցներ) գնելու համար սպառողներին սուբսիդիաների տրամադրում այն պայմանով, որ այդ

⁹ Տես՝ Անդրեյ Ռիխտեր և Տարաս Շեվչենկո. «Թվային վերգետնյա հեռուստատեսության զարգացումը Ռուսաստանում և Ուկրաինայում», IRIS-Plus, 2010-1. Ստրասբուրգ, Եվրոպական աուդիովիզուալ կենտրոն, 2010, էջ 10

սարքերը տեխնոլոգիապես չեզոք են, հատկապես, եթե դրանք խրախուսում են ինտերակտիվության բաց ստանդարտների կիրառում,

- ֆինանսական փոխհատուցում այն հեռարձակողներին, ովքեր ստիպված են մինչև լիցենզիաների գործողության ժամկետի ավարտը դադարեցնել անալոգային հաղորդումները, այն պայմանով, որ պետք է հաշվի առնել թվային հեռարձակման տրված հնարավորությունները:

Մի քանի դեպքերում, ԵՄ-մ միջամտել է հեռարձակման թվային համակարգին անցնելու գործընթացի պետական ֆինանսավորման հետ կապված հարցերում: Մի կողմից, գործընթացի պետական ֆինանսավորումը լիովին արգելված չէ: Սակայն, ԵՄ օրենքների համաձայն, պետական միջամտությունը թույլատրվում է միայն որոշ հանգամանքներում, եթե այն համապատասխանում է ընդհանուր շահերին: Այնուամենայնիվ, «ընդհանուր շահեր» հասկացությունը լրացուցիչ հստակեցման կարիք ունի:

Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵՆ Նախարարների կոմիտեի (2003)9 երաշխավորությունը շատ հստակ դրույթներ է պարունակում նոր միջավայրում հանրային հեռարձակողին վերաբերող սկզբունքների մասին: Սկզբունքներից մեկը վերաբերվում է հանրային հեռարձակողի *ֆինանսավորման* հարցերին:

«Տեխնոլոգիական նոր համատեքստում, հանրային հեռարձակողի սփռման աստիճանը և հասարակության մեջ նրա ներդրման ծավալը կարող է նվազել, եթե չլինի համապատասխան և կայուն ֆինանսավորում: Հաշվի առնելով ծրագրեր ձեռքբերելու, պատրաստելու և պահպանելու գների աճը, երբեմն նաև հեռարձակման գների աճը, անդամ պետությունները պետք է հնարավորություններ ստեղծեն, որ հանրային հեռարձակողները կարողանան ստանան ֆինանսական միջոցներ, որոնք անհրաժեշտ են իրենց նպատակին ծառայելու համար»:¹⁰

Հնարավոր է և պետք է խրախուսել, որ ոլորտի ներկայացուցիչները տարբեր տեսակի ապակողավորման սարքեր տրամադրեն ցածր գներով: Միևնույն ժամանակ, ապակողավորման սարքերը պետք է փոխգործակցելի լինեն, որպեսզի մրցակիցների ազդանշանների ընդունումը չբացառվի: Հայեցակարգը պարունակում է հավակնոտ մի խնդիր, ըստ որի «ՀՀ անապահով քաղաքացիների և խոցելի խմբերի համար թվային հեռարձակմամբ հեռուստառադիոծրագրերի ընդունման և ապակողավորման սարքավորումներ» պետք է տրամադրվեն (Մաս VI): Միգուցե այստեղ գործ ունենք թարգմանչական սխալի հետ, սակայն մենք առաջարկում են անապահով ընտանիքներին տրամադրել միայն ապակողավորման սարքեր և զերծ մնալ թվային հեռուստացույցների և ռադիոների տրամադրումից:

¹⁰ Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵՆ Նախարարների կոմիտեի (2003)9 երաշխավորության հավելված: Տես՝ <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=38043&BackColorInternet=9999CC&BackColorIntranet=FFBB55&BackColorLogged=FFAC75>

Ողջ աշխարհով մեկ, կառավարություններն ընդունել են, որ արդարացի չէր լինի ակնկալել, որ բոլորը պետք է ինքնուրույն հոգան ապակողավորման սարքեր գնելու ծախսը: Օրինակ՝ ԱՄՆ-ի կառավարությունը իրականացրել է կուլոնների բավականին թանկ մի ծրագիր, որի շրջանակներում մարդիկ 40 դոլարի գեղջ են ստացել ապակողավորման սարքեր գնելիս:¹¹

Հայեցակարգում արտացոլված չեն հեռարձակողների բոլոր ծախսերը, որոնք կապված են հեռարձակման թվային համակարգին անցնելու հետ: Ողջամիտ է, որ ծախսերի մի մասը հոգան մասնավոր հեռարձակողները, սակայն պետք է գիտակցել, որ անհրաժեշտ են խրախուսման ավելի կոնկրետ մեխանիզմներ, որպեսզի նրանք ցանկանան ներդրումներ կատարել: Այսօրվա տնտեսական ճգնաժամի պայմաններում գովազդից ստացված եկամուտների ծավալը նվազել է: Դրա հետ մեկտեղ, ծառայություններից օգտվելու ցածր մակարդակի և լսարանի մասնատվածության պարագայում (ինչը տեղի է ունենում վերգետնյա թվային հեռուստատեսության ներմուծման ժամանակ), շուկան դառնում է բավականին ոչ գրավիչ, ինչը նշանակում է, որ թվայնացումը կարող է բերել յուրաքանչյուր մասնակցի գովազդային եկամուտների անկման: Բացի նրանից, որ դա կարող է սահմանափակել գովազդից եկամուտներ ստանալու մասնավոր հեռարձակողների հնարավորությունները, որպեսզի ավելի չվատթարացնել մասնավոր հեռարձակողների պայմանները, դա կարող է նաև հետևանքներ ունենալ հեռարձակման մասին օրենսդրության համար, օրինակ, այնպիսի խնդիրների հետ կապված, ինչպիսին է՝ հանրային հեռարձակողի կողմից գովազդ հեռարձակելու իրավունքն արգելելը կամ սահմանափակելը, որպեսզի շուկան էլ ավելի չխանգարվի:

Չնայած, որ գոյություն ունեն բազմաթիվ կազմակերպություններ, որոնք օգուտներ են ստանալու թվայնացումից (օրինակ՝ կազմակերպություններ, ում տիրույթը ազատվում է, սարքավորումներ արտադրողներ ու վաճառողներ, այլ ծառայություններ մատուցողներ և այլն), դրանք այն ընկերությունները չեն, որ ստիպված են լինելու հոգալ թվայնացման նախնական ծախսերը: Մրցակցության հարցերում, ինչպիսիք են՝ կոնցենտրացիան և համագործակցության հարցերը, երբ որոշ կոնցենտրացիաներ կարող են բերել գերիշխող դիրքի, որը կարող է չարաշահվել, անհրաժեշտ է հաշվի առնել հատուկ կարիքները, օրինակ՝ ենթակառուցվածքների մեջ ներդրումների հսկայական ծավալը: Հնարավոր է, որ որոշ կոնցենտրացիաներ ողջ գործընթացի սևանկացումից խուսափելու միակ միջոցը լինեն: Չափազանց կարևոր են հասանելիության արդար կանոնները:

Հեռարձակողների ծանր ֆինանսական բեռը կարելի է թեթևացնել կենտրոնացված ցանցերի միջոցով, ինչպիսին է, օրինակ, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիո հաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն: Այս մոդելով, պետական մի կորպորացիա կամ պետական լիցենզիայով գործող մասնավոր մի կազմակերպություն ստեղծում և աշխատացնում է հաղորդիչների ազգային ցանց,

¹¹ Տես՝ Ջոն Բուրգես. «Անշատում. Հեռարձակման թվային համակարգին անցնելու մարտահրավերները», գեկույց Մամուլին միջազգային աջակցության կենտրոնի համար: 19 նոյեմբերի, 2009, Վաշինգտոն, Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, 2009, էջ 23

որից հեռարձակողներն օգտվում են վարձակալության հիմունքներով: Մի քանի հեռարձակողներ իրենց ազդանշանները հաղորդում են մեկ ընդհանուր մուլտիպլեքսի միջոցով: Մուլտիպլեքսն, ըստ էության, մալուխային հեռուստատեսության եթերային տարբերակ է, որը հեռարձակում է այլ ընկերությունների կողմից ստեղծված բովանդակությունը, անկախ դրանից, թե դրանք վերգետնյա կայաններ են, թե միայն մալուխային ծրագրեր տրամադրող ընկերություններ:

Շատ երկրներ խիստ կանոններ են ընդունում մուլտիպլեքսների սակագների և պայմանների վերաբերյալ, որպեսզի փոխադարձ սուբսիդիաներն արգելվեն: 2006թ.-ին Ֆինլանդիայի հաղորդակցության կարգավորող մարմինը մանրամասն կանոններ է հրապարակել «Դիջիտալ Օյ» մուլտիպլեքսի սակագների և շահույթի վերաբերյալ: Ըստ այդ կանոնների, գները պետք է «հիմնված լինեն արժեքի վրա և լինեն ոչ խտրական»: Մանրամասն սահմանվել են ամորտիզացիայի կանոնները՝ մինչև ամենափոքր սառեցնող սարքերի արժեքի հաշվարկման մեթոդները: Մեկից ավելի մուլտիպլեքսների լիցենզիաներ տրամադրելը համարվում է մրցակցության ապահովման միջոց:¹²

4. Ենթակառուցվածքային խնդիրներ

Ենթակառուցվածքների հասանելիություն

Թվայնացումը փոխում է հեռարձակման ողջ պատկերը, քանի որ հեռարձակողներն այլևս չեն ունենում սեփական ենթակառուցվածքներ, ինչպես ընդունված էր անալոգային հեռարձակման ժամանակ: Դրա փոխարեն, նրանք օգտվում են մեկ ուրիշի սեփականություն հանդիսացող ենթակառուցվածքներից: Դա շատ կարևոր է դարձնում հասանելիության և փոխկապակցվածության մասին կանոնները, որոնք նման են հեռահաղորդակցության մասին օրենքին: Նախատեսվում են առանձին լիցենզիաներ բովանդակության և հեռարձակման համար: Հասանելիության կանոններն ու պայմանները պետք է մշակվեն պլանավորման գործընթացի վաղ շրջանում: Այդ կանոններն ու դրանց կիրառումը պետք է լինեն թափանցիկ և օբյեկտիվ:

Հայեցակարգում խոսվում է ենթակառուցվածքներին ազատ և հավասար հասանելիության մասին: Սակայն այդ ձևակերպումը հստակ չէ և հասկանալի չէ, արդյո՞ք ազատ ասելը նշանակում է անվճար, թե՞ ոչ: Այնուամենայնիվ, հավասար հասանելիության և բոլորի համար արդար հիմունքներով ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորություններ ստեղծելը լավ նպատակներ են:

Կարևոր խնդիր է լինելու թվային հեռարձակման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների մեջ ներդրումների հարցը: Հայեցակարգը մի քիչ աղոտ է այս խնդրի վերաբերյալ և համոզիչ չէ այն խրախուսման միջոցների հարցում, որ

¹² Տես՝ Ջոն Բուրգես. «Անջատում. Հեռարձակման թվային համակարգին անցնելու մարտահրավերները», գեկույց Մամուլին միջազգային աջակցության կենտրոնի համար: 19 նոյեմբերի, 2009, Վաշինգտոն, Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, 2009, էջ 19-20

պատասխանատու օպերատորները պետք է ստանան համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում (Մաս VIII): Ծախսերը հաշվարկելու և մասնավոր ընկերությունների կողմից ներդրումներ կատարելու պատրաստակամությունը գնահատելի ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախնական ծախսերը բարձր են, իսկ թվային հեռարձակման գրավչությունն ու ներդրումային պոտենցիալն ի հայտ են գալիս միայն որոշ ժամանակ անց և համապատասխան գնով: Առավելությունները (կամ դրական արդյունքները) երևալու են միայն ավելի ուշ, ինչպես գրված հայեցակարգում (Մաս VIII), սակայն այդ առավելությունների ի հայտ գալու ժամկետները և դրանց ծավալները հայտնի չեն: Խնդիրը չափազանց նոր է ամենուրեք, դրա համար էլ կոնկրետ համեմատություններ անելն անհնար է:

Կոնցենտրացիաներ ենթակառուցվածքի ոլորտում

Թվային հեռարձակման ենթակառուցվածքները բարդ և թանկարժեք են, ինչը նշանակում է, որ հավանաբար ենթակառուցվածքի սեփականատերերը թվով քիչ և լինելու: Հետևաբար, այդ ընկերությունները մեծ ազդեցություն են ունենալու շուկայում: Այդ ազդեցության չարաշահումից խուսափելու համար անհրաժեշտ են համապատասխան օրենքներ: Թվայնացումը հաճախ ամրապնդում է օպերատորների արդեն իսկ գերիշխող դիրքը, և այդ ազդեցությունը պետք է հաշվի առնվի ինչպես թվայնացման ծրագրի մեջ, այնպես էլ կարգավորող մարմնի կողմից: Եթե տեղի է ունենում կառուցվածքային տարանջատման և մասնավորեցման գործընթաց, ապա այն պետք է շարունակվի և թվայնացումը չպետք է այն հետաձգի կամ դադարեցնի: Այդպիսի գործընթաց պիտի տեղի ունենա Հայաստանում: Հայեցակարգում գրված է, որ, մի կողմից, թվայնացման ծախսերի ծավալը պահանջելու է որոշ պետական ռեսուրսներ, սակայն մյուս կողմից, այդ ծախսերը պահանջելու են նաև մասնավոր միջոցներ: Սա ճիշտ նկատառում է, սակայն, ինչպես արդեն նշել ենք, մասնավոր ներդրումներ խթանող միջոցները հայեցակարգում հստակեցված չեն:

Մեր պատկերացմամբ, Հայաստանում ցանցի գերիշխող օպերատորը պետական կամ նախկինում պետական «Հայաստանի հեռուստատեսային և ռադիո հաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն է: Սակայն, թվայնացումը չպետք է դիտվի որպես այդ կառույցի գերիշխող դիրքն էլ ավելի ամրապնդելու միջոց: Հեռահաղորդակցության ոլորտի կարգավորող մարմնի ներգրավումը կարևոր է: Այնուամենայնիվ, հեռարձակման ցանցի մասնավորեցումը պետք է շարունակվի, իսկ թվայնացումը չպետք է օգտագործվի որպես պետության ավելի մեծ ներգրավվածություն ունենալու պատճառ: Հայաստանում հեռարձակման հաղորդիչ ցանցը հեռարձակողներից առանձին է: Անկախ նրանից, որ հաղորդիչ ցանցը հանրային սեփականություն կարող է հանդիսանալ, անհրաժեշտ է խստագույնս հետևել հասանելիության բոլոր կանոններին, իսկ հաղորդիչ ցանցի սեփականության ձևը ոչ մի կերպ չի կարող ազդել հեռարձակման բովանդակության և հեռարձակվող ալիքների ընտրության վրա:

Այս առումով, անհրաժեշտ ենք համարում նշել մուլտիպլեքսների օպերատորների թիվը այն երկրներում, որտեղ անալոգային հեռարձակումն ամբողջությամբ

դադարեցվել է և այժմ գործում է միայն թվային հեռարձակումը: Այսպես՝ Շվեյցարիայում և Ֆինլանդիայում գործում են 3 օպերատորներ, Նիդերլանդներում, Դանիայում, Նորվեգիայում և Շվեդիայում՝ 2, իսկ Գերմանիայում՝ 11:¹³

Հայաստանը պետք է խուսափի միայն մեկ ազգային օպերատոր ունենալու վատ պրակտիկայից: Օրինակ՝ Ռումինիայում, աուդիովիզուալ խորհուրդը և հեռարձակողները չեն կարող համաձայնության գալ այն հարցում, թե ով պետք է նշանակի երկրի մուլտիպլեքսի օպերատորին: 2009թ.-ին Սլովենիայի միակ մուլտիպլեքսի օպերատորը սակագների հետ կապված վեճի պատճառով դադարեցրել է երեք առևտրային ալիքների հեռարձակումը: Ալիքների սեփականատիրոջ՝ «Central European Media Enterprises Ltd.» ընկերության կարծիքով, Սլովենիայի մուլտիպլեքսը չափազանց բարձր սակագներ են սահմանել: Այդ պատճառով ընկերությունը շարունակում է աշխատել անալոգային հեռարձակմամբ, ինչը դեռ հնարավոր է, և հույս ունի, որ մինչ անալոգային հեռարձակման դադարեցումը Սլովենիան ունենալու է երկրորդ մուլտիպլեքս, ինչը բերելու է մրցակցության և սակագների իջեցման:

Այստեղ նշված խնդիրները կարգավորվում են մրցակցության մասին օրենքներով, սակայն համարյա բոլոր երկրներում մրցակցության մասին ընդհանուր օրենքները զուգորդվում են հաղորդակցության մասին առանձին օրենքի հետ, որպեսզի հնարավոր լինի հաշվի առնել այն հատուկ խնդիրները, որոնք վերաբերվում են ընդհանուր տնտեսական հետաքրքրություն ներկայացնող հեռարձակման ծառայությանը: Անկախ այն բանից, թե ինչպես են կարգավորվում այս խնդիրները, անհրաժեշտ է ունենալ համապատասխան օրենքներ և դրանց կիրառումն ապահովող մարմիններ: Հակառակ դեպքում կա վտանգ, որ տեղի է ունենալու թվայնացման դրական արդյունքների կորուստ և գերիշխող դիրքի չարաշահում՝ հեռարձակողների հաշվին:

,Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքում կա մի ընդհանուր և շատ կարճ դրույթ, որով արգելվում է կոնցենտրացիան: Անհրաժեշտ է գնահատել, թե արդյո՞ք այդ դրույթը հստակ և բավարար է թվային միջավայրում, որտեղ հեռարձակողների դերերը քիչ թե շատ փոփոխված են և որտեղ բովանդակություն տրամադրողների և հաղորդիչ ցանցերի սեփականատերերի կոնցենտրացիաները տարբեր բաներ են, սակայն երկուսն էլ ենթակա են օրենքով կարգավորման:

Կարգավորող մարմնի դերը

Չնայած, որ շուկայական սկզբունքները ցածր գներ և բարձր որակ ապահովող աշխույժ շուկա ստեղծելու լավագույն միջոցն են, սակայն երբեմն լինում են իրավիճակներ, երբ տարբեր պատճառներով շուկան չի կարող լիարժեք և արդյունավետ ձևով աշխատել: Այդ դեպքերում անհրաժեշտ է կարգավորող մարմինների միջամտությունը, որպեսզի մրցակցությունն աշխատի՝ չվտանգելով այլ կարևոր նպատակները: Հեռարձակման ոլորտում այդպիսի կարևոր

¹³ Տես՝ ,Թվային վերգետնյա հեռուստատեսության զարգացումը Ռուսաստանում և Ուկրաինայում՝ IRIS-Plus, 2010-1, Ստրասբուրգ, Եվրոպական աուդիովիզուալ կենտրոն, 2010, էջ 40-41.

նպատակներից է՝ հեռարձակման (հատկապես՝ հանրային հեռարձակման) համատարած հասանելիությունը: Կարևոր է, որ իշխանությունները հետևեն շուկայի գործունեությանը հատկապես հեռարձակման թվային համակարգին անցնելու ժամանակաշրջանում: Դա պետք է արվի լսարանի տեսակետից (գների և ծառայությունների մատուցման մոնիտորինգ), ինչպես նաև ոլորտում ակտիվ զարգացումների տեսակետից (ենթակառուցվածքներից օգտվելու գների հսկողության միջոցով): Տեխնիկական օբյեկտների սեփականատերերը/օպերատորները պետք է դրանց հասանելիություն ապահովեն թափանցիկ, արդար և օբյեկտիվ ձևով: Եթե բովանդակություն տրամադրողները չկարողանան ողջամիտ պայմաններով օգտվել ենթակառուցվածքներից, ապա դա կբերի բազմակարծության կորստի, բազմակարծության, որին կարելի էր հասնել թվայնացման շնորհիվ: Պրակտիկ նկատառումներով, շրջակա միջավայրի պահպանության և ծախսի տեսակետից ելնելով, իմաստ ունի հնարավորության դեպքում օգտվել արդեն իսկ գոյություն ունեցող ենթակառուցվածքից: Նույն պատճառներով իմաստ ունի, որ միևնույն ենթակառուցվածքները ծառայեն տարբեր նպատակների և օգտագործողների: Պետք է թույլ տալ, որ այս հարցերը կարգավորի շուկան, սակայն շուկան միշտ չէ, որ կարող է լավագույն լուծել դրանք: Այդ դեպքերում կարևոր է կարգավորող մարմնի դերը: Կողմերը (ձեռնարկությունները) բանակցելու են հասանելիության պայմանների և նմանատիպ այլ հարցերի շուրջ, իսկ կարգավորող մարմինը միջամտելու է միայն այն դեպքում, եթե կողմերը չկարողանան համաձայնության գալ: Նույնը պետք է արվի նաև թվային հեռարձակման պարագայում, սակայն կարևոր է, որ կարգավորող մարմինն ի վիճակի լինի դա անելու:

Ինչպես արդեն նշել ենք, ենթակառուցվածքների հետ կապված մեծ ծախսերը, այն հարցերը, թե ով է ներդրում կատարելու և ինչու, պարզ չեն բացատրված: Ողջամիտ է, որ թվայնացման հետ կապված ծախսերի մի մասը հոգան հենց հեռարձակողները, բայց նրանք պետք է իրատեսորեն ի վիճակի լինեն դա անելու:

Հայեցակարգն ուրվագծում է շահագրգիռ տարբեր կողմերի համար թվայնացման գործընթացի օգուտները և ծախսերը (ընդհանուր առմամբ): Դա լավ է, որովհետև այսպես շահագրգիռ կողմերը թափանցիկ ձևով իրազեկվում են այս խնդրի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն մի քանի անգամ նշվել է, մասնավոր հեռարձակողների ներդրումները խրախուսելու մեխանիզմները պարզ չեն: Օգուտները շատ հեռավոր ապագայում են և շատ անորոշ, որպեսզի դրանք այսօր խրախուսման հստակ միջոցներ հանդիսանան: Խրախուսման միջոցները պետք է լինեն որքան հնարավոր է պարզ, քանի որ հակառակ դեպքում զարգացումն առաջ տանելու համար պետության կողմից չափից դուրս միջամտություն է անհրաժեշտ լինելու:

Ենթակառուցվածքների և հնարավոր խոչընդոտների խնդրի կարևորությունն ու եռությունն ավելի մանրամասն ներկայացված են ԵԱՀԿ-ի ուղեցույցի մեջ:¹⁴

ԵՄ-ի դիրեկտիվներ

¹⁴ ԵԱՀԿ՝ Հեռարձակման թվային համակարգին անցնելու ուղեցույց, հատկապես՝ Գլուխ 2

ԵՄ-ի դիրեկտիվները, և հատկապես՝ Հասանելիության մասին դիրեկտիվը (2002/19/EC) և դրա փոփոխված տարբերակները (2009/136/EC և 2009/140/EC), ինչպես նաև Շրջանակային դիրեկտիվը (2002/21/EC), հիմք են հանդիսանում այն պահանջների համար, որոնք կարող են հետաքրքրել նաև ԵՄ անդամ չհանդիսացող պետություններին: Այդ դիրեկտիվները ցույց են տալիս, թե ինչպիսի տեսք պետք է ունենան հաղորդակցության ժամանակակից կանոնները՝ դրանով իսկ օրինակելի ձևեր տրամադրելով նաև ԵՄ-ից դուրս գտնվողների համար: Բացի այդ, ԵՄ-ի հետ սերտ կապեր ունեցող երկրի համար, ինչպիսին է Հայաստանը, կարևոր է ունենալ համատեղելի կանոններ: Հայեցակարգի մեջ նշված են ռեգիոնալ մոտեցման օգուտները, ինչը դրական է: ԵՄ-ի դիրեկտիվներից կարելի է առանձնացնել Շրջանակային դիրեկտիվ 2002/21/EC-ը, որը պահանջում է խրախուսել թվային հեռուստատեսության ինտերակտիվ ծառայությունների և սպառողների մակարդակով թվային հեռուստատեսության սարքավորումների փոխգործակցելիությունը, որպեսզի ապահովվի տեղեկատվության ազատ հոսքը, ՉԼՄ-ներում բազմակարծությունը և մշակութային բազմազանությունը: Համընդհանուր ծառայության մասին դիրեկտիվի (2002/22/EC) հավելվածում նշված է, որ անհրաժեշտ է ապահովել սպառողների համար թվային հեռուստատեսության սարքավորումների փոխգործակցելիությունը: Այս դրույթները ներառված են նաև դիրեկտիվ 2009/136-ի մեջ, որով փոփոխության են ենթարկվել նախորդ դիրեկտիվները: Դիրեկտիվները հիմնված են տեխնոլոգիական չեզոքության գաղափարի վրա, այսինքն՝ որոշիչ են ոչ թե ազդանշանի հաղորդման եղանակները, այլ ծառայությունը՝ որպես այդպիսին: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ծառայությունները կարողանան աշխատել տարբեր տեխնոլոգիական պլատֆորմների վրա:

Առևտրի դրույթները ծառայությունների մասին դիրեկտիվը (2007/65/EC), որը որոշ չափով նման է 1989թ.-ի Անդրսահմանային հեռարձակման մասին կոնվենցիայի բովանդակությանը, կամ էլ հանդիսանում է դրա թարմացված տարբերակը, անդրադառնում է հիմնականում հեռարձակման բովանդակության խնդիրներին: Այս փաստաթղթերը հենց թվայնացմանը չեն վերաբերվում, սակայն դրանցում տեղ գտած սկզբունքները, որոն կապված են հեռարձակման բովանդակության հետ, միևնույն ձևով գործում են նաև թվային հեռարձակման պարագայում: Թվային համակարգին անցնելու մասին ԵԱՀԿ-ի ուղեցույցի¹⁵ մեջ նշված է, «ակնհայտ է, որ մի համակարգից մյուսն անցնելու ժամանակ, երբ բազմազան և տարատեսակ ծրագրեր են մատչելի դառնում, կառավարությունները և կարգավորող մարմինները պետք է հատկապես զգոն լինեն՝ անչափահասների և մարդկային արժանապատվության պաշտպանությունն ապահովելու և ատելության և բռնության քարոզչություն թույլ չտալու համար: Ծնողական հսկողության նոր տեխնիկական միջոցների զարգացումը չպետք է նվազեցնի հեռարձակողների և ծառայություններ մատուցողների պատասխանատվության աստիճանը»:

Այնուամենայնիվ, ԵՄ-ի դիրեկտիվները թվայնացման գործընթացի մանրամասներ չեն պարունակում, նույնիսկ անդամ պետությունների համար: Նշված են

¹⁵ Նույն տեղում, էջ 25

թվայնացման գործընթացի նպատակները և ընդհանուր սկզբունքները, սակայն անդամ պետություններն իրենք պետք է մշակեն կոնկրետ գործընթացները և ժամանակացույցները: Եվրոպական Հանձնաժողովը կարող է որոշ կանոններ ընդունել այդ գործընթացի համար (համաձայն 2009/140/EC դիրեկտիվի), սակայն, ինչպես երևում է տարբեր անդամ պետություններում գործընթացի ժամանակացույցների տարբերությունից, յուրաքանչյուր երկիր, լինի այն ԵՄ-ի անդամ, թե ոչ, ինքը պետք է մշակի գործընթացի մանրամասները՝ ելնելով միջազգային պայմանավորվածություններից, որոնց հիմքում ընկած են ՅՄՄ-ի կողմից սահմանված ժամկետները, ինչպես և նշված է հայեցակարգում: Այսպես, ԵՄ-ի դիրեկտիվները կարող են օգտագործվել ոգեշնչման համար, սակայն դրանք մանրամասն լուծումներ չեն առաջարկում:

5. Կարգավորման հետ կապված խնդիրներ

2006/2007թթ.-ի մեկնաբանություններում նշվել էր, որ Հայաստանում կարգավորող մարմնի դերը թույլ էր՝ և՛ ընդհանրապես, և՛ թվայնացման ծրագրի համատեքստում: Հայեցակարգում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հիշատակված է որպես կարգավորող մարմին, ինչը դրական է, սակայն դրա դերը մնում է որոշ չափով ոչ հստակ: Կարգավորող մարմինն այսուհետ պետք է սերտորեն ներգրավված լինի թվայնացման գործընթացի մեջ: 2009թ.-ին փոփոխության են ենթարկվել նշանակման և այլ հարցերի հետ կապված որոշ դրույթներ օրենսդրության մեջ: Ընդհանուր առմամբ, կարգավորող մարմինը պետք է լինի ուժեղ և անկախ, որպեսզի կարողանա արդյունավետորեն և օբյեկտիվորեն կատարի իր պարտականությունները թվայնացման գործընթացի ժամանակ, այդ թվում՝ պլատֆորմների (և հատկապես՝ անվճար հեռարձակվող պլատֆորմների) վրա տեղադրվելիք բովանդակություն տրամադրողների ընտրության նման կարևոր հարցում: Կարգավորող մարմինը պետք է սերտորեն ներգրավված լինի կամ նույնիսկ ղեկավարի թվայնացման գործընթացը, այդ թվում դրան նախապատրաստվելու աշխատանքները: Այդպես է Ֆրանսիայում, Միացյալ Թագավորությունում, Ուկրաինայում և այլն:

Կարգավորող մարմինը պետք է ներդաշնակեցնի տեխնիկական կողմի (նման է հեռահաղորդակցության կարգավորման) և բովանդակային կողմի դերերը: Հայեցակարգում կարգավորող մարմինն, կարծես թե, շատ մեծ ուշադրություն չի դարձվում: Նախորդ տարիներին տրված մեկնաբանություններում շեշտվել էր, թե որքան կարևոր է, որ կարգավորող մարմինը կարևոր դեր խաղա թվայնացման գործընթացում: Հայեցակարգում նշված է, որ մուլտիպլեքսների համար ծրագրերն ընտրվելու են անկախ կարգավորող մարմնի կողմից, ինչը լավ է: Սակայն, Հայաստանի կարգավորող մարմինը կարող է հզորացման կարիք ունենալ: Թվայնացումը չի լուծում արդեն իսկ գոյություն ունեցող խնդիրները: Այն կարող է նույնիսկ լրացուցիչ խնդիրներ առաջացնել: Այդ պատճառով, անհրաժեշտ է

հզորացնել կարգավորող մարմինը, որպեսզի այն կարողանա կառավարել այն լրացուցիչ և տարբեր խնդիրները, որ առաջ են գալու թվայնացման հետևանքով:

Լիցենզիաներ

Ինչպես արդեն նշել ենք, թվային հեռարձակման ոլորտի կարգավորող մարմինը որոշ չափով ավելի նման է հեռահաղորդակցության ոլորտի կարգավորողի, քան հեռարձակման դասական կարգավորողի, որովհետև այդ ոլորտում շատ կարևոր է ենթակառուցվածքների հասանելիության հարցը: Լիցենզիաները պետք է փոխվեն, որովհետև լինելու են առանձին լիցենզիաներ բովանդակության և հաղորդիչ օբյեկտների համար, որոնք սովորաբար տրվում են տարբեր կազմակերպությունների:

Չայեցակարգում լավ նկարագրված են լիցենզիաների միջև տարբերությունները, քանի որ լիցենզավորվելու են տարբեր խնդիրներ: Սակայն, այս ամենն իրականացնելու գործընթացի կանոնները պետք է ավելի հստակ լինեն, քանի որ դա շատ է տարբերվելու այսօրվա գործող համակարգից, և այդ իսկ պատճառով կանոնները պետք է գործընթացի հենց սկզբից շատ հստակ լինեն: Սա հենց այն խնդիրներից է, որոնք նմանատիպ հայեցակարգերում պետք է ավելի մանրամասն ներկայացվեն, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ հայեցակարգը հիմնված է դեռ մի քանի տարի առաջ մշակված ռազմավարության վրա: Եթե համեմատենք նախկին ռազմավարության հետ, հիմա արդեն ավելի պարզ է, թե լիցենզիան ինչ տեսք պետք է ունենա, սակայն մանրամասնություններ դեռ չկան: Տեղին է նաև այն նշումը, որ լիցենզիաների գործողության ժամկետները պետք է բավականին երկար լինեն: Այս հարցում հաշվի են առնվել 2006/2007թ.-ին արված մեկնաբանությունները: Դեռ սահմանված չէ, թե գործողության ժամկետն ինչպիսին է լինելու: Այս հարցով որոշում կայացնելիս, կարգավորող մարմնի տեսակետը պետք է կարևոր լինի: Արդեն նշվել է, որ գործողության երկար ժամկետները ծառայում են որպես ներդրումների խրախուսման մեխանիզմներ:

Լավ է, որ բաց մրցույթը նշվում է որպես հիմնական սկզբունք: Սակայն, պարզ չեն մանրամասները, այդ թվում՝ տարբերությունը գործող կարգավորման պրակտիկայի հետ: Օրենքն այս առումով բարեփոխման կարիք ունի:

Մրցույթների սառեցում

Անալոգային լիցենզիաների սառեցումը ողջամիտ է: Սակայն, դա երբեք չպետք է օգտագործվի բազմակարծությունը սահմանափակելու համար և միշտ պետք է օգտագործվի առանց որևէ խտրականության: Առաջարկված սառեցման վերաբերյալ 2008թ.-ին արված մեկնաբանությունների մեջ նշվել էր, որ, չնայած որ մրցույթների սառեցումը լավ բան է, քանի որ դա մի քայլ է հեռարձակման թվային համակարգին անցման ճանապարհին և օգնում է լուծել հեռարձակողների լեգիտիմ ակնկալիքների հարցը, սակայն շատ կարևոր է, որ սառեցումը ոչ օբյեկտիվ ձևով չկիրառվի: Քանի որ արդեն իսկ լիցենզիա ունեցողների լիցենզիաների ժամկետները չեն երկարացվելու, դա առաջացնելու է խնդիրներ լեգիտիմ ակնկալիքների տեսանկյունից: Այդ պատճառով շատ կարևոր է, որ գործընթացը լինի թափանցիկ և լավ պլանավորված: Գործընթացը չպետք է

այնքան երկար լինի, որ նմանատիպ անցումային խնդիրներ առաջանան: Հեռարձակման թվային համակարգին անցած շատ երկրներում անալոգային հեռարձակման լիցենզիաներ ունեցողները ստացել են թվային հեռարձակման լիցենզիաներ, ինչը դրական է լեգիտիմ ակնկալիքների տեսանկյունից: Միևնույն ժամանակ, եթե կան բազմազանության պակասի հետ կապված խնդիրներ, սա կարող է էլ ավելի ամրապնդել առկա իրավիճակը: Այդ պատճառով, անհրաժեշտ է մտածել այն մասին, որ անալոգային համակարգում հեռարձակողները շարունակեն հեռարձակել արդեն թվային համակարգում, և ուրիշները նույնպես լիցենզիաներ ստանալու հնարավորություն ունենան: Բազմազանության հետ կապված հարցերն ավելի մանրամասն ներկայացված են ստորև, սակայն այստեղ հարկ է նշել կարգավորող մարմնի կարևորությունը այս հարցում, որովհետև, գոնե անցումային շրջանում, կա վտանգ, որ թվայնացումը կարող է էլ ավելի վատթարացնել իրավիճակը, եթե նախկինում բազմազանության պակաս է նկատվել:

Որպես այդպիսին, սառեցումն անհրաժեշտ է, քանի որ գոյություն ունի այն հեռարձակողների լեգիտիմ ակնկալիքների հարցը, ում լիցենզիաները պետք է դադարեցվեն: Միևնույն ժամանակ, հեռարձակման երկու զուգահեռ համակարգեր երկար ժամանակ ունենալը թանկ է: Այդ պատճառով անհրաժեշտ է հեռարձակման անալոգային համակարգի դադարեցման հստակ ժամկետ սահմանել:

2008թ.-ի սեպտեմբերի 19-ին, մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցիչը ՀՀ կառավարությանը խնդրել է վերանայել ,Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի փոփոխությունները, որոնց համաձայն հեռարձակման նոր լիցենզիաների տրամադրումը սառեցվել էր մինչև 2010թ.-ի հուլիսի 20-ը՝ կապված թվային համակարգի ծրագրված անցման հետ: Այդ սառեցումը անհնար է դարձնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008թ.-ի հունիսի որոշման կատարումը, որի համաձայն ,Ա1+» հեռուստաընկերությանը լիցենզիա տրամադրելու մերժումը համարվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում և Հայաստանին կոչ է արվել թույլ տալ, որ հեռուստաընկերությունը նորից դիմի լիցենզիայի համար: Մրցույթների սառեցումն, ըստ էության, հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշմանը: Չնայած, որ Հայաստանի իշխանությունները օրենքի փոփոխությունները պատճառաբանում են հեռարձակման թվային համակարգին անցումով, թվայնացման գործընթացը առաջին քայլը չպետք է լինի հեռարձակման լիցենզիաների համար մրցույթների սառեցումը:

6. Ծրագրեր

Թվային հեռարձակման իմաստը կայանում է ոչ միայն ծրագրերի քանակի ավելացման մեջ, ինչպես նշված է հայեցակարգի ներածությունում, այլ նաև ծրագրերի բազմակարծության ավելացման մեջ: Այդ պատճառով մենք ցանկանում

ենք շեշտել հայեցակարգի Մաս II-ում (Ռազմավարության հիմնական նպատակները) նշված 6-րդ նպատակի (մրցակցության և բազմակարծության խթանում):

Միևնույն ժամանակ, մտահոգություն է առաջացնում հայեցակարգի Մաս VI-ի (Խնդիրները) 4-րդ կետը, որտեղ գրված է, հեռուստառադիոծրագրերի թվային հեռարձակման գործընթացում հոգևոր ժառանգության պահպանման, մշակութային բազմազանության և բազմակարծության ապահովում: Արդյո՞ք յուրաքանչյուր ծրագիր պետք է ապահովի ,հոգևոր ժառանգության պահպանում, մշակութային բազմազանություն և բազմակարծություն, թե՞ նրանք բոլորը պետք է ներկայացնեն այդ ժառանգությունն ու բազմակարծությունը: Նման պահանջը կարող է տեղին լինել հանրային հեռարձակողի պարագայում, սակայն յուրաքանչյուր մասնավոր ալիքի առջև նման պահանջ դնելը դժվար թե ժողովրդավարական լինի: Լիցենզիաներ տրամադրող մարմինը՝ Յեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, պետք է փորձի այնպիսի միջավայր ստեղծել Յայաստանի հեռարձակման դաշտում, որը ապահովելու է ,հոգևոր ժառանգության պահպանումը, մշակութային բազմազանությունը և բազմակարծությունը, սակայն անհավանական է, որ այս սկզբունքներից յուրաքանչյուրը պետք է վերաբերվի յուրաքանչյուր հեռարձակվող ծրագրին:

Այստեղ տեղին է հիշել, որ ԵԱՀԿ-ի անդամ պետությունները պարտավորվել են ,օգտագործել հաղորդակցության ժամանակակից միջոցների շնորհիվ ընձեռնված բոլոր հնարավորություններից՝... բոլոր տեսակների տեղեկատվության ավելի ազատ և ավելի լայն տարածմանը նպաստելու համար:¹⁶

Այսպես, հեռարձակման թվային համակարգին անցման ժամանակ կարևոր է, որ Յեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը՝ որպես կարգավորող մարմին, հեռարձակման ոլորտում սեփականության կոնցենտրացիայի բացառման ուղղված ջանքերից բացի նաև քայլեր ձեռնարկի բովանդակության մեջ բազմակարծությունն ավելացնելու ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է ներդնել միջոցներ, որոնք պետք է ազդեն կամ սահմանափակեն ցանցի օպերատորի՝ մուլտիպլեքսի կազմի մեջ մտնողներին որոշելու ազատությունը: 2010թ.-ի մարտ ամսին ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցչի կողմից հրապարակված ,Յեռարձակման թվային համակարգին անցնելու ուղեցույցի¹⁷ մեջ և մյուս ռեսուրսներում ներկայացված են հետևյալ օրինակները Եվրոպայից:

1. Նիդեռլանդներում և Ավստրիայում գործում են կանոններ, համաձայն որոնց օպերատորները պարտավոր են հեռարձակել հանրային հեռարձակողների և մի շարք այլ վերգետնյա հեռարձակողների ալիքներ: Սակայն այդպիսի

¹⁶ 1986թ.-ին Վիեննայում կայացած ԵԱՀԿ-ի հանդիպման ,Յամագործակցություն մարդասիրական և այլ ոլորտներում եզրափակիչ փաստաթուղթ, կետ (35) / ,Խոսքի ազատություն, տեղեկատվության ազատ հոսք, մամուլի ազատություն. 1975-2007 թթ. ԵԱՀԿ-ի հիմնական դրույթները Տես՝ http://www.osce.org/fom/item_11_30426.html

¹⁷ Տես՝ http://www.osce.org/documents/rfm/2010/03/42898_en.pdf էջ 22

կանոնների կարիք չկա Միացյալ Թագավորությունում, Իսպանիայում կամ Իտալիայում, որտեղ վերգետնյա հեռարձակողներին տրամադրել են թվային հզորության իրենց մասը: Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Ուկրաինայի օրինակը, որտեղ ,Յեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը (2006թ.-ին կատարված փոփոխություններով) նախատեսում է, որ վերգետնյա ցանկացած հեռարձակող իրավունք ունի ստանալ թվային հեռարձակման համար լիցենզիա առանց նոր մրցույթի, բայց հատուկ վճարով (Հոդված 31, կետ 4):¹⁸

2. Նորվեգիայում մուլտիպլեքսի օպերատորը որոշ հզորություններ ազատ է թողնում այսպես կոչված ,բաց ալիքների համար, և եթե տեղական ալիքները պահանջեն մուտք դեպի պլատֆորմ, ապա ցանցի օպերատորը պարտավոր է համապատասխան լուծում գտնել:
3. Իտալիայում ընդունել են հատուկ միջոցներ՝ ,անկախ ալիքների համար պլատֆորմի հասանելիությունն ապահովելու համար: Խոսքը այն ալիքների մասին է, որոնք հեռարձակողներին չեն պատկանում և գործում են վերգետնյա թվային հեռուստատեսության ցանցում:

Այս միջոցները կարևոր են, քանի որ հզորությունները տրամադրվել են ոչ թե նորմալ ընթացակարգով, այլ քիչ թե շատ ,գնվել են այն հեռարձակողների կողմից, ովքեր ցանկանում են աշխատել վերգետնյա թվային հեռուստատեսության ցանցերում: Այս միջոցների նպատակն է՝ խուսափել սեփական ալիքներ ունեցող վերգետնյա թվային հեռուստատեսության ցանցի օպերատորների ուղղահայաց ինտեգրման արդյունքում ստեղծված խոչընդոտներից:¹⁹

Իտալիայում անալոգային հեռուստատեսության կառուցվածքի վիճակը նման է Հայաստանի պես հետխորհրդային երկրներում առկա վիճակին: Այդ առումով, հետաքրքիր է տեսնել, թե ինչպիսի ջանքեր են գործադրվել Իտալիայում հեռարձակման թվային համակարգին անցնելու գործընթացի ժամանակ բովանդակության մեջ բազմակարծությունն ապահովելու համար:

Խնդրին վերաբերող լավ պրակտիկայի օրինակ է Իտալիայի կարգավորող մարմնի՝ *Autorità per le garanzie nelle comunicazioni* 2005թ.-ի հուլիսի 6-ի որոշումը: Այդ որոշումը հիմնված է 2004թ.-ի ,Հեռարձակման մասին օրենքի համապատասխան դրույթների վրա: Այդ որոշմամբ, կարգավորող մարմինը սահմանել է պայմաններ, որոնց համաձայն բովանդակության անկախ տրամադրողները պետք է հեռարձակվեն երկու հիմնական ընկերությունների՝ RAI և R.T.I. S.p.A. (Mediaset խմբի մաս կազմող), վերգետնյա թվային հեռուստատեսության մուլտիպլեքսների հզորությունների 40 տոկոսով, մինչև թվային տիրույթի ազգային պլանի լիովին իրականացումը: Բովանդակություն տրամադրողները պարտավոր են՝

¹⁸Տես՝ Անդրեյ Ռիխտեր և Տարաս Շեվչենկո. ,Թվային վերգետնյա հեռուստատեսության զարգացումը Ռուսաստանում և Ուկրաինայում, IRIS-Plus, 2010-1, Ստրասբուրգ, Եվրոպական աուդիովիզուալ կենտրոն, 2010, էջ 15

¹⁹ Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի երկրներում վերգետնյա թվային հեռուստատեսության հարցերով աշխատանքային խմբի վերջնական զեկույց, 2 հունիսի, 2004: Տես՝ Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի պաշտոնական վեբկայքը՝ http://www.epra.org/content/english/press/papers/DTTWG_finalreport.doc

- Հարգել բազմակարծության և օբյեկտիվության սկզբունքները և տրամադրել տարբեր ոճերի ծրագրեր, որոնք պետք է բավարարեն տարբեր կատեգորիաների հեռուստադիտողների ճաշակները, հատկապես ,փրայմ թայմե-ի ժամանակ,
- Հարգել մարդու հիմնարար իրավունքները և չհեռարձակել բռնությամբ լի և պոռնոգրաֆիկ բնույթի ծրագրեր,
- Տրամադրել գրավիչ ծրագրեր, որպեսզի ավելանա վերգետնյա թվային հեռուստատեսության հաճախականությունների հեռուստադիտողների թիվը և աճեն գովազդային եկամուտները, ինչպես նաև ծրագրերում տեղ գտնեն հետևյալ կատեգորիաներից առնվազն երկուսը՝
 - 1) Չվարճալի ծրագրեր, ինչպիսիք են՝ թոք-շոուներ, խաղեր, որոշակի միջոցառումներին/հարցերին վերաբերող ծրագրեր (սպորտային միջոցառումներ, սոցիալական խնդիրներ, մշակույթ, երաժշտություն),
 - 2) Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ծրագրեր, որոնք խորացնում են գիտելիքները գիտական, մշակութային, պատմական կամ երաժշտական հարցերի մասին,
 - 3) Գեղարվեստական կինոնկարներ, հեռուստատեսային կինոնկարներ, շոուներ, կատակերգություններ և կինեմատոգրաֆիայի գործեր՝ ի լրումն նրանց, որոնք պարտադիր պետք է ցուցադրվեն եվրոպական աշխատանքների հետ կապված պարտավորությունների շրջանակներում,
 - 4) Երեխաներին և երիտասարդներին նվիրված ծրագրեր:

Եթե հզորությունները չեն բավարարում բոլոր դիմումները բավարարելու համար, ապա նախապատվությունը պետք է տրվի այն կազմակերպություններին, ովքեր տրամադրում են վերոհիշյալ ոճերից ամենաշատը: Հզորությունները պետք է բաշխվեն արդար, թափանցիկ և խտրականությունից զերծ պայմաններով՝ ծրագրերում բազմակարծություն ապահովելու համար: Այդ պատճառով, RAI-ն և R.T.I.-ը պետք է առնվազն 60 օր առաջ իրենց վեբ-կայքերի միջոցով հանրությանը տեղեկացնեն վերգետնյա թվային հեռուստատեսության հզորություններ տրամադրելու իրենց մտադրության մասին և նշեն իրենց կողմից կիրառվող տեխնիկական և տնտեսական պայմանները: RAI/R.T.I-ի և բովանդակություն տրամադրողների միջև կնքված պայմանագրերը պետք է նախօրոք տրամադրվեն կարգավորող մարմին, որպեսզի վերջինս պարզի նրանց համապատասխանությունը վերոհիշյալ պահանջներին: Կարգավորող մարմինը նաև իրավասու է լուծել ցանկացած վեճ, որը կարող է ծագել այդ պայմանագրերի գործողության ժամկետի ընթացքում:²⁰

Հասանելիությունն ապահովելու համար ընդունված կարգավորիչ այլ միջոցները նկարագրված են Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի կողմից հրապարակված զեկույցում: Օրինակ՝ տարբեր կանոնների միջոցով կարելի է պահանջել, որ ցանցեր տրամադրողները արդար, թափանցիկ և խտրականությունից զերծ պայմաններ առաջարկեն: Կարելի է պահանջել, որ ցանցեր տրամադրողները, ինչպես նաև պլատֆորմների օպերատորները, հրապարակեն բովանդակություն տրամադրողներին մատուցվող տեխնիկական

²⁰ Մ. Կապելլո. «Իտալիա. RAI և RTI մուլտիպլեքսների թվային վերգետնյա հեռուստատեսության հզորությունների 40 տոկոսը՝ բովանդակության անկախ տրամադրողների համար» // IRIS 2005-9:15/26. Տես՝ <http://merlin.obs.coe.int/iris/2005/9/article26.en.html>

ծառայությունների գնացուցակներ: Այն դեպքերում, երբ ցանցի/պլատֆորմի օպերատորը նաև հեռարձակող է, կարելի է պահանջել, որ նրանք առանձին հաշվապահություն վարեն գործունեության տարբեր տեսակների համար:²¹

Լրատվամիջոցներում բազմակարծության մասին ԵԽ-ի նախարարների կոմիտեի երաշխավորության մեջ առաջարկվում է, որ անդամ պետությունները պարբերաբար գնահատեն ազգային մակարդակով մամուլի բազմակարծությունը և բովանդակության բազմազանությունը խթանող առկա միջոցների արդյունավետությունը, քննության առնեն դրանք փոփոխելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական զարգացումները:

ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի Ներկայացուցչի հովանու ներքո Թբիլիսիում տեղի ունենած կոնֆերանսի ժամանակ (Յարավային Կովկասի ՉԼՄ-ների 5-րդ կոնֆերանս, 13-14 նոյեմբերի, 2008թ.), որը նվիրված էր հանրային հեռարձակման ապագային և հեռարձակման թվային համակարգին անցմանը, մասնակիցները մտահոգություն էին հայտնել, որ փոքր տեղական հեռարձակողները ի վիճակի չեն լինելու մտնել շուկայի մեջ՝ առանց դրսից օգնության (օրինակ, Գյումրիի ԳԱԼԱ հեռուստաընկերությունը): Նման հեռարձակողները ժողովրդականություն են վայելում տեղի հեռուստադիտողների շրջանում, նրանք կարևոր են մամուլի տեղեկատվական և քաղաքական բազմակարծության համար, սակայն կառավարությունը նրանց միայնակ է թողնում՝ թվայնացման հետ կապված աճող ծախսերի հետ դեմ առ դեմ: Մտահոգություն էր հայտնվել, որ կառավարությունները, կարծես թե, գոհ են, որ փոքր մասնավոր հեռարձակողները ի վիճակի չեն հասնելու իրենց լսարանին:

ԵԽ-ն խորհուրդ է տալիս, որ, թեև կառավարությունները պետք է խրախուսեն, որ մի համակարգից մյուսն անցումը արագ տեղի ունենա, նրանք պետք է այնպես անեն, որ հաշվի առնվեն հանրության, ինչպես նաև հեռարձակողների, հատկապես՝ ոչ առևտրային, ռեգիոնալ և տեղական հեռարձակողների շահերը: Այս առումով, անհրաժեշտ է ապահովել պատշաճ իրավական դաշտ և բարենպաստ տնտեսական և տեխնիկական պայմաններ:²²

Այս համատեքստում հարկ ենք համարում նշել, որ, օրինակի համար, միայն տեղական թվային վերգետնյա ալիքների թիվը կազմում է 196՝ Դանիայում, 25՝ Նորվեգիայում և 16՝ Ավստրիայում:²³

Հայեցակարգում խոսվում է սոցիալական մուլտիպլեքսի (կամ ծրագրերի սոցիալական փաթեթի) մասին (տես՝ Մաս IX): Սոցիալական փաթեթի գաղափարն

²¹ Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի երկրներում վերգետնյա թվային հեռուստատեսության հարցերով աշխատանքային խմբի վերջնական զեկույց, Ադյուսակ 5.4, 2 հունիսի: Տես՝ Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի պաշտոնական վեբկայքը՝ http://www.epra.org/content/english/press/papers/DTTWG_finalreport.doc

²² Տես՝ Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵԽ նախարարների կոմիտեի (2003)9 երաշխավորության հավելված.

²³ Տես՝ Թվային վերգետնյա հեռուստատեսության զարգացումը Ռուսաստանում և Ուկրաինայում, 2010-1. Ստրասբուրգ, Եվրոպական անդրադիզուալ կենտրոն, 2010, էջ 40-43

այն է, որ լինի հանրային ծառայության բնույթի հեռարձակում, որը մատչելի է բոլոր մարդկանց: Հանրային հեռարձակողի՝ նման հեռարձակում ապահովելու պարտականությունը թվային համակարգին անցնելու ժամանակ մնում է ուժի մեջ: Ավելի մեծ թվով ալիքներ և քանակական առումով ավելի շատ ընտրություն ունենալը դեռ չի նշանակում, որ ավելի շատ բազմակարծություն կա: Այդ պատճառով, հանրային հեռարձակողները պետք է շարունակեն հոգալ այն կարիքները, որոնք մասնավոր հեռարձակողները չեն բավարարում: Շատ երկրներում թվայնացման ժամանակ հանրային հեռարձակողի արդեն իսկ առկա ծրագրերին ավելացվում է գոնե մեկ նոր ծրագիր, օրինակ՝ շուրջօրյա նորությունների ծրագիր: Սոցիալական փաթեթը պետք է ներառի նաև որոշ անվճար առևտրային ալիքներ, որոնք պետք է լրացնեն հանրային հեռարձակողի ալիքները: Հայեցակարգում բացատրված չէ սոցիալական փաթեթի կազմավորման մեթոդը:

Հայեցակարգում նշված է, որ ,թվայնացման գործընթացի հայեցակարգային խնդիրներից է ռադիոհեռուստատեսային ծառայությունների անվճար և վճարովի սկզբունքով մատուցման ընտրությունը, այսինքն՝ Հայաստանում անվճար հեռարձակվող (free-to-air (FTA)) կամ վճարովի թվային հեռուստաալիքների ստեղծումը: Սա չի համապատասխանում Եվրոպայում տիրող ներկա իրավիճակին, որտեղ կիրառվում է կամ անվճար ալիքների (FTA) և վճարովի հեռուստատեսության համակցության կամ էլ միայն անվճար վերգետնյա թվային հեռուստատեսության (FTA DTT) բիզնես մոդելը: Բարեբախտաբար, հայեցակարգն առաջարկում է ,մեկ անվճար սոցիալական փաթեթ (հինգից վեց ալիք ներառող) և մի քանի վճարովի փաթեթներ ստեղծել (Մաս VI):

,Անդրսահմանային հեռուստատեսության մասին ԵԽ-ի կոնվենցիան²⁴ (որը Հայաստանը չի ստորագրել) և Աուդիովիզուալ մեդիա ծառայությունների մասին դիրեկտիվը (որան զուգահեռ ԵՄ-ի փաստաթուղթը)²⁵ թվարկում են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մի քանի կարևոր նպատակներ, որոնք վերաբերվում են աուդիովիզուալ բովանդակությանը: Համաձայն այդ փաստաթղթերի, անդամ պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել, որպեսզի՝

- Աուդիովիզուալ ծառայությունները չպարունակեն ռասայի, սեռի, կրոնի կամ ազգային պատկանելիության հիման վրա ատելություն սերմանող որևէ բան,²⁶

²⁴ Ընդունվել է 1989թ.-ի մայիսի 5-ին: Տեքստը փոփոխվել է Արձանագրության (ETS No. 171) դրույթների համաձայն, որն ուժի մեջ է մտել 2002թ.-ի մարտի 1-ից: Ներկայումս կրկին վերանայվում է:

²⁵ Անդամ պետություններում հեռուստատեսության թվայնացման աշխատանքների վերաբերյալ օրենքի որոշ դրույթների, կարգավորման կանոնների և վարչական գործողությունների համաձայնեցման մասին 89/552/EEC դիրեկտիվի մեջ փոփոխություններ մտցնելու մասին Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007/65/EC դիրեկտիվ (11 դեկտեմբերի, 2007): Տես՝ <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:32007L0065:en:NOT>

²⁶ (2003)9 երաշխավորության հոդված 3b, կետ 9-ում նույնպես խոսվում է թվային հեռարձակման ժամանակ ատելություն, ռասայական և կրոնական բռնություն չբարոգելու մասին:

- Պատշաճ ձևով սահմանափակվի վճարովի աուդիտիզուալ այն նյութերի մատչելիությունը, որոնք կարող են լրջորեն ազդել անչափահասների ֆիզիկական, մտավոր կամ բարոյական զարգացման վրա,²⁷
- Նորությունների կարճ ռեպրոտաժներ պատրաստելու նպատակով, համայնքում գործող ցանկացած հեռարձակող արդար, ողջամիտ և խտրականությունից զերծ հիմունքներով կարողանա մասնակցել հանրությանը հետաքրքրող միջոցառումներին, որոնք մասին ռեպրոտաժներն այնուհետև էքսկլյուզիվ հիմունքներով հեռարձակվում են համապատասխան հեռարձակողի կողմից:²⁸

Ակնհայտ է, որ մի համակարգից մյուսն անցնելու ժամանակ, երբ բազմազան և տարատեսակ ծրագրեր են մատչելի դառնում, կառավարությունները և կարգավորող մարմինները պետք է հատկապես զգոն լինեն՝ անչափահասների և մարդկային արժանապատվության պաշտպանությունն ապահովելու և ատելության և բռնության քարոզչություն թույլ չտալու համար: Ծնողական հսկողության նոր տեխնիկական միջոցների զարգացումը չպետք է նվազեցնի հեռարձակողների և ծառայություններ մատուցողների պատասխանատվության աստիճանը:

Ցավոք, բովանդակությանը վերաբերող նման պահանջներ հայեցակարգը չի պարունակում: Մինևույն ժամանակ, ինչպես և հեռարձակման ցանկացած կարգավորման պարագայում, բովանդակության կարգավորումը երբեք չի կարող նշանակել նախօրոք կատարվող գրաքննություն կամ խոսքի ազատության անհարկի սահմանափակումներ: Որպեսզի ավելի լավ պատկերացնել, թե որն է հեռարձակման լեզիտիմ կարգավորումը, կարելի է ուսումնասիրել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի և տարբեր երկրներում գործող օրենքների և սկզբունքների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները:

7. Հանրային հեռարձակողի դերը

Հայեցակարգի Մաս II-ում, որը վերնագրված է՝ ,Ռազմավարության հիմնական նպատակները, նշված է, որ հանրային և մասնավոր հեռարձակողների հավասարակշռված համակեցությունը հեռարձակման ոլորտում հարաբերությունների կարգավորման 7 սկզբունքներից մեկն է: Փաստաթղթից պարզ չէ, թե որն է այդ ,հավասարակշռության եությունը: Մինևույն ժամանակ, ԵԽ-ն հայտարարել է, որ հանրային հեռարձակումը ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկն է: Անկախ այն բանից, թե հանրային հեռարձակման ծառայությունները տրամադրվում են հանրային կազմակերպությունների, թե մասնավոր ընկերությունների կողմից, հանրային հեռարձակումը տարբերվում է գուտ առևտրային կամ քաղաքական նպատակներով հեռարձակումից, որովհետև այն ունի հստակ նպատակ, այն է՝ տնտեսական և քաղաքական իշխանություն ունեցողներից անկախ գործել: Այն հասարակությանը տալիս է տեղեկատվություն, մշակույթ, կրթություն և

²⁷ (2003)9 երաշխավորության Հոդված 3i, կետ 9-ը նույնպես վերաբերվում է այս խնդրին.

²⁸ Հոդված 3k.

զվարճանքներ, ինչպես նաև նպաստում է քաղաքացիների սոցիալական, քաղաքական և մշակութային զարգացմանը և սոցիալական համախմբվածությանը: Այդ պատճառով, հանրային հեռարձակումը սովորաբար համընդհանուր է իր բովանդակության և մատչելիության առումով: Այն երաշխավորում է խմբագրական կազմի անկախությունը և անկողմնակալությունը: Այն որակի չափանիշներ է սահմանում: Այն առաջարկում է բազմազան ծրագրեր և հոգում է հասարակության բոլոր խմբերի կարիքները: Ավելին, այն հաշվետու է հասարակության առջև:²⁹

Այս սկզբունքները կիրառելի են և պետք է հաշվի առնվեն ցանկացած փոփոխություններ կատարելիս, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի Հայաստանը համապատասխանի թվային հեռուստատեսության և ռադիոյի պահանջներին: 2008թ.-ին մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի կողմից կազմակերպված Կենտրոնական Ասիայի ՉԼՄ-ների 10-րդ կոնֆերանսի ժամանակ հայտարարվել է, որ հանրային հեռարձակումը ժողովրդավարության հիմնական գործիքներից է, որն անփոխարինելի է ընտրությունների ազատությունն ու թափանցիկությունն ապահովելու, ատելության սերմանման դեմ պայքարելու և երկրում ապրող փոքրամասնությունների մշակույթը պահպանելու համար՝ օբյեկտիվ ռեպորտաժներ և բարձրորակ ծրագրեր հեռարձակելու միջոցով:

Ավելին, ԵԱՀԿ-ն շեշտում է, որ թվային հեռարձակման դարում էլ ավելի է բարձրանում որակյալ և օբյեկտիվ ծրագրեր հեռարձակող և գովազդ չպարունակող հանրային հեռարձակողի դերը:³⁰ Այս տեսակետը համապատասխանում է ԵԽ-ի դիրքորոշմանը, համաձայն որի ,նոր թվային միջավայրում անհրաժեշտ է պահպանել հանրային հեռարձակողի՝ որպես միավորող գործոնի դերը, որն ի վիճակի է բնակչության բոլոր շերտերին առաջարկել ծրագրերի և ծառայությունների լայն ընտրություն:³¹

Տեղեկատվական հասարակության մեջ հանրային ՉԼՄ-ների նպատակի մասին ԵԽ նախարարների կոմիտեի 2007թ.-ի հունվարի 31-ի թիվ (2007)3 երաշխավորության մեջ խոսվում է թվային միջավայրի ազդեցության և տեղեկատվական հասարակության մեջ հանրային հեռարձակողի հատուկ դերի մասին: Այնտեղ նշված է, որ հանրային ծառայություններն է՛լ ավելի կարևոր են թվային հեռարձակման դարում, և որ դրանք կարող են տրամադրվել տարբեր պլատֆորմների միջոցով, ինչը բերում է հանրային ՉԼՄ-ների ձևավորման:

Երաշխավորության մեջ առաջարկվում է, որ անդամ պետությունները երաշխավորեն թվային նոր միջավայրում հանրային ՉԼՄ-ների հիմնարար դերը, հանրային ՉԼՄ-ների հատուկ նպատակների մասին դրույթներ ներառեն

²⁹ ԵԽԽԿ-ի թիվ 1641 (2004) երաշխավորություն հանրային հեռարձակողի վերաբերյալ: Տես՝ <http://assembly.coe.int/main.asp?Link=/documents/adoptedtext/ta04/erec1641.htm>

³⁰ Կենտրոնական Ասիայի ՉԼՄ-ների 10-րդ կոնֆերանս «Կենտրոնական Ասիայում հանրային հեռարձակողի ապագան և թվային համակարգին անցումը», Ալմատի, 16-17 հոկտեմբերի, 2008: Տես՝ http://www.osce.org/documents/html/pdf/oh/html/34491_en.pdf.html

³¹ Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵԽ նախարարների կոմիտեի (2003)9 երաշխավորություն

օրենսդրության և կանոնների մեջ (մասնավորապես՝ հաղորդակցության նոր ծառայությունների մասին դրույթներ), երաշխավորեն ֆինանսական և կազմակերպչական պայմանները, որոնք անհրաժեշտ են հանրային ՉԼՄ-ներին՝ նոր թվային միջավայրում իրենց գործառնությունները թափանցիկ և հաշվետու ձևով կատարելու համար, թույլ տան, որ հանրային ՉԼՄ-ները լիովին և արդյունավետորեն արձագանքեն տեղեկատվական հասարակության մարտահրավերներին՝ հարգելով Եվրոպայում գործող Էլեկտրոնային ՉԼՄ-ների ոլորտի երկակի կառուցվածքը (հանրային և մասնավոր հեռարձակողների առկայություն) և ուշադրություն դարձնելով շուկային և մրցակցության հարցերին, ինչպես նաև ապահովեն հանրային ՉԼՄ-ների համընդհանուր հասանելիությունը բոլոր անհատների և սոցիալական խմբերի համար:³²

Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵՆՆՍԻՄԻ-ի կոմիտեի (2003)9 երաշխավորությունը շատ հստակ սահմանում է այն սկզբունքները, որ անդամ պետությունները պետք է կիրառեն նոր միջավայրում հանրային հեռարձակողների նկատմամբ:

Անդամ պետությունները պետք է ստեղծեն ֆինանսական, տեխնիկական և այլ պայմաններ, որոնք հանրային հեռարձակողներին թույլ կտան լավագույնս ծառայել իրենց նպատակին՝ միևնույն ժամանակ հարմարվելով թվային նոր միջավայրին: Այս առումով, հանրային ծառայության նպատակներին հասնելու միջոցները կարող են ներառել հետևյալը՝ նոր հատուկ ալիքների տրամադրում, որոնք մասնագիտացված են, օրինակ, տեղեկատվության, կրթության կամ մշակույթի ոլորտում, կամ Էլ նոր ինտերակտիվ ծառայություններ (օրինակ՝ EPG-ներ)³³ ծրագրերի հետ կապված առցանց ծառայություններ: Հանրային հեռարձակողները պետք է կենտրոնական դեր խաղան թվային վերագետնյա հեռարձակման անցնելու գործընթացում: ”

Փաստաթղթում արժարժված է նաև հանրային հեռարձակման համընդհանուր հասանելիության հարցը:

Համընդհանուր հասանելիությունը թվային դարում հանրային հեռարձակման զարգացման համար հիմնարար նշանակություն ունի: Այդ պատճառով, անդամ պետությունները պետք է ապահովեն համապատասխան իրավական, տնտեսական և տեխնիկական պայմանների առկայությունը, որոնց շնորհիվ հանրային հեռարձակողները կարողանան ընդգրկված լինել տարբեր թվային պլատֆորմներում (մալուխային, արբանյակային, վերագետնյա)՝ իրենց բազմազան և որակյալ ծրագրերով և ծառայություններով, որոնք ի վիճակի են միավորել հասարակությունը, հատկապես հաշվի առնելով առաջարկվող ծրագրերի դիվերսիֆիկացիայի և

³² Տեղեկատվական հասարակության մեջ հանրային ՉԼՄ-ների նպատակի մասին ԵՆՆՍԻՄԻ-ի կոմիտեի թիվ (2007)3 երաշխավորություն (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից, 2007թ.-ի հունվարի 31-ին, փոխնախարարների 985-րդ հանդիպման ժամանակ): Տես՝ <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1089759>

³³ EPG անգլերեն հապավումը նշանակում է ծրագրերի Էլեկտրոնային ուղեցույց

մասնագիտացման պատճառով լսարանի մասնատման ռիսկը: Այս առումով, հաշվի առնելով թվային պլատֆորմների դիվերսիֆիկացիան, անհրաժեշտ է կիրառել հատուկ կանոններ, համաձայն որոնց օպերատորները պարտավոր են հեռարձակել հանրային հեռարձակողների ծրագրերը (the must-carry rule), որքանով որ դա ողջամտորեն հնարավոր է, որպեսզի հնարավոր լինի երաշխավորել այդ պլատֆորմների միջոցով նրանց ծառայությունների և ծրագրերի մատչելիությունը:³⁴

Ինչ վերաբերում է հանրային հեռարձակողների դերին, Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի կողմից ուսումնասիրված դեպքերի մեծ մասում հանրային հեռարձակողներին հատկացրել են մեկ կամ ավելի մուլտիպլեքսներ, այլ ոչ թե միայն առկա վերգետնյա ալիքները միաժամանակ հեռարձակելու համար հզորություններ: Դեպքերի մեծ մասում հանրային հեռարձակողներն ազատ կարող են ինքնուրույն որոշել մուլտիպլեքսի կազմը:³⁵

Թվային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ընդլայնել հանրային հեռարձակողի ծրագրերի տիրույթը: Դա նպաստում է կառավարությունների այն նպատակների իրագործմանը, որոնք կապված են թվային և հանրային հեռարձակումը խթանելու հետ: Միևնույն ժամանակ, լիցենզավորման վճարի կամ հանրային/պետական միջոցների հաշվին ֆինանսավորվող այս հնարավորությունը չպետք է բերի անարդար մրցակցության մասնավոր հեռարձակողների հետ և դրանով իսկ խանգարի անկախ հեռուստատեսության ոլորտի զարգացմանը: Այսպիսի ընդլայնումը պետք է համարվի որպես առանձին մի զարգացում, որն ունի հստակ հանրային ծառայության արժեք: Այդ պատճառով, այն պետք է թույլատրվի՝ որոշակի պայմաններով:

Հայեցակարգում խոսվում է հանրային հեռարձակման հատուկ դերի մասին, սակայն առանձնապես բան չի ասվում այն մասին, թե այդ դերն ինչպես է իրականացվելու:

Վերջին և ոչ պակաս կարևոր հարցը թվային դարում հանրային հեռարձակողի ֆինանսական անկախության ապահովման գործնական քայլերի հարցն է (տես՝ վերևում): Ինչպես և բոլոր հետ-խորհրդային պետությունները, որտեղ հանրային հեռարձակողներ կան, Հայաստանը չի ներդրել լիցենզավորման վճար՝ հանրային հեռարձակողի ֆինանսական անկախությունն ապահովելու համար: Միևնույն ժամանակ, որպես հայեցակարգի 5-րդ խնդիր գրված է՝ ,հեռուստառադիոծրագրերի թվային հեռարձակման և տարածման հանրային ծառայությունների սակագների կարգավորման ապահովում: Մենք չենք առաջարկում, որ անմիջապես լիցենզավորման վճարներ ներդրվեն: Սակայն հայեցակարգում այս հարցի շուրջ խնդիրները պետք է ավելի հստակ լինեն:

³⁴ Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵՆ Նախարարների կոմիտեի (2003)9 Երաշխավորության հավելված:

³⁵ Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի երկրներում վերգետնյա թվային հեռուստատեսության հարցերով աշխատանքային խմբի վերջնական զեկույց, 2 հունիսի, 2004: Տես՝ Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի պաշտոնական վեբկայքը՝ http://www.epra.org/content/english/press/papers/DTTWG_finalreport.doc

2009թ.-ին փոփոխություններ են մտցվել ,Յեռուստատեսության և ռադիոյի մասին ԶՅ օրենքում և 35-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. ,Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճի դեպքում Հանրային հեռուստառադիոընկերության համար նախատեսվում են նախորդ տարվա պետական բյուջեով հաստատված ոչ պակաս հատկացումներ: Մենք կարծում ենք, որ այս դրույթը բավարար չէ թվային համակարգին հանրային հեռարձակողի անցումը հեշտացնելու համար: Ավելի վաղ, օրենքի փոփոխությունները վերլուծած փորձագետներից մեկը նշել է. ,օրենքում նշված չէ, թե երբ և ինչ հանգամանքներում կարող են հատկացումները նվազել. Որևէ երաշխիք չկա, հատկապես այսօր, որ պետական բյուջեի ծախսային մասն ամեն տարի աճելու է: Եթե տեղի ունենա հակառակը, արդյո՞ք դրանից պետք է տուժի հանրային հեռարձակողը կամ Յեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը: Եթե այո, ապա ինչու՞: Ինչու՞ պետք է հանրային հեռարձակողի և անկախ կարգավորող մարմնի ֆինանսավորումը կախված լինի պետական եկամուտներից, և ի՞նչ չափով: Պարզ է, որ առաջարկված սխեման թույլ է տալիս, որ խորհրդարանական մեծամասնությունը հեշտությամբ աջակցի այդ մարմիններին կամ նրանց պատժի՝ այսպիսով նրանց կախվածության մեջ դնելով խորհրդարանական մեծամասնությունից: Այս ձևով, հանրային պարտականություններ կատարելու փոխարեն ,անկախ հանրային հեռարձակողը և ,անկախ կարգավորող մարմինը զբաղվելու են ինքնագրաքննությամբ:³⁶ Այսպիսով, հանրային հեռարձակողի ֆինանսական անկախության ապահովման մեխանիզմները պետք է նկարագրվեն հայեցակարգում:

Մինևույն ժամանակ, հարևան երկրները փորձում են հանրային հեռարձակողի ֆինանսական կայունության ապահովման այլ տեսակի երաշխիքներ ընդունել: Վրաստանի խորհրդարանը վերջերս փոփոխություններ է մտցրել ,Յեռահաղորդակցության մասին օրենքի մեջ, որոնց համաձայն Վրաստանի հանրային հեռարձակողի տարեկան ֆինանսավորումը պետք է կազմի ՀՆԱ-ի առնվազն 0.12 տոկոսը կամ ավելին: Մինչև 2008թ.-ը Վրաստանում արդեն գործել է նման մի համակարգ, որի շրջանակներում հեռարձակողին երաշխավորում էին ՀՆԱ-ի 0.15 տոկոսի չափով եկամուտ: Վրաստանի հանրային հեռուստատեսությամբ ,փրայմ թայմիե ժամանակ գովազդն արգելված է, բացառությամբ սպորտային միջոցառումների ժամանակ:³⁷ Ադրբեջանում ընդունվել է իրավական նորմ, որի համաձայն 2014թ.-ին պետք է ներդրվի լիցենզավորման վճար (չնայած, որ սկզբից նախատեսված էր այդպիսի վճար ներդնել 2010թ.-ին): Արտասահմանում հանրային հեռարձակողի ֆինանսավորման լավ և վատ օրինակների ուսումնասիրությունը կարող է Հայաստանին օգնել լավագույն տարբերակն ընտրելու գործում:

³⁶ Տես՝ http://www.osce.org/documents/rfm/2009/04/37230_en.pdf

³⁷ ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցիչը 2010թ.-ի հունվարի 19-ին ողջունել է այս քայլը: Տես՝ http://www.osce.org/fom/item_1_42400.html

Եթե լիցենզավորման վճարի ներդրումն ուշանում է անցումային ժամանակաշրջանում, ապա Հայաստանի հանրային հեռարձակողի համար թվայնացման գործընթացը հեշտացնելու համար անհրաժեշտ է ընդունել ֆինանսական խրախուսման այլ մեխանիզմներ: Տարբերակներից մեկը կարող է լինել այն, որ *Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը* դառնա առաջին մուլտիպլեքսի օպերատորը: Այս առումով շեշտում ենք հայեցակարգի (Մաս VII) հետևյալ դրույթի կարևորությունը՝

«անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան լիցենզիայով ապահովել հանրային հեռուստառադիոընկերությանը՝ պահպանելով հանրային հեռարձակումը թվային միջավայրում, և թվային հեռարձակման միջավայրում դոմինանտ ընկերությունների (կոնգլոմերատների)՝ թվային մուլտիպլեքսներ, հեռուստակայաններ, հեռուստահաղորդումների արտադրողներ և ծրագրային ապահովման մատակարարներ միավորող օպերատորների կազմավորումը:

8. Այլ ծառայությունները և թվայնացումը

Թվային միջավայրում օգուտներ կարելի է ստանալ նաև այլ ծառայություններից՝ բացի հեռարձակումից: Սա թվային դիվիդենտի մի մասն է, որի մասին արդեն խոսվել է վերևում՝ թվայնացման ֆինանսավորման հետ կապված: Ավելի վաղ կատարված մեկնաբանություններում նշվել էր, որ այդ խնդիրը կարծես թե մեծ ուշադրության չի արժանացել հայկական ծրագրում, և նույն այս կարծիքը մնում է ուժի մեջ:

Հայեցակարգի հենց սկզբում թվայնացման հնարավոր առավելությունների շարքում նշված է ինտերակտիվությունը: Սակայն հայեցակարգում այլ տեխնոլոգիաների և կոնվերգենցիայի հնարավոր օգուտների մասին խոսք չկա: Գործընթացի ժամանակ անհրաժեշտ է ավելի շատ ուսումնասիրել այլ լրացուցիչ առավելությունները: Դա չպետք է թողնել հետագայի համար, քանի որ այլ ծառայությունները և նրանց կողմից տիրույթի օգտագործումը պետք է լինեն թվայնացման պլանավորման մաս: Ինչպես արդեն նշվել է, այդ ուրիշ ծառայությունները կարող են եկամուտ բերել, որը կարելի է օգտագործել գործընթացը ֆինանսավորելու համար:

Ինչպես նշված է ԵԱՀԿ-ի ուղեցույցում,³⁸ բազմաթիվ ալիքներ ունենալու հնարավորությունից բացի, թվային հեռարձակումը տեխնոլոգիաների կոնվերգենցիայի միջոցով թույլ է տալիս տեղեկատվական այլ ծառայություններ մատուցել մարդկանց, քանի որ տարբեր տեսակի ծառայություններ կարող են տարածվել միևնույն հաղորդիչների միջոցով: Այդ ծառայությունները կարող են բոլորը միասին առաքվեն կամ գոնե օգտագործեն նույն ենթակառուցվածքները և տերմինալների սարքավորումները, կամ դրանց մի մասը: Եթե գործընթացը չի

³⁸ Էջ 35

կազմակերպվի, թվայնացումը կարող է նվազեցնել այդ ծառայությունների մատչելիության անհավասարությունները և ավելացնել տեղեկատվության հասանելիությունը: Որպեսզի պարզ լինի, թե ինչպես այս ամենը պետք է կիրառվի Հայաստանում, անհրաժեշտ է վերլուծել երկրում տեղեկատվական հասարակության տարբեր ծառայությունների ներկայիս վիճակը: Հայեցակարգը միայն շատ հակիրճ է անդրադառնում այս հարցերին, սակայն դա առանձին հետազոտության թեմա է, որը պետք է կատարվի վաղ շրջանում: Միայն ծառայությունների առումով կարիքները պարզելուց հետո կարելի է որոշել, թե ինչպես լավագույնս օգտվել կոնվերգենցիայի հնարավորություններից: Արագ ինտերնետի մատչելիությունը և տարածվածության աստիճանը այն գործոններից է, որ պետք է պարզվի, քանի որ դա կարող է ազդել նրա վրա, թե մարդիկ ինչպես են ընդունում հեռարձակումները և ինչպիսի այլ ծառայություններ են ակնկալում:

B. Գործընթացը

1. Թվայնացման ծրագիր

Հեղինակները վստահ չեն, թե սույն ուսումնասիրության առարկա դարձած հայեցակարգն ինչ առնչություն ունի ՀՀ կառավարության որոշմամբ ընդունման ենթակա գործողությունների ծրագրի հետ: Մենք գնահատում ենք, որ ՀՀ կառավարության 2009թ.-ի նոյեմբերի 12-ի նիստի արձանագրության համաձայն, պետք է տեղի ունենան հայեցակարգի հանրային քննարկումներ: Հույս ենք հայտնում, որ այս վերլուծությունն իր ներդրումը կունենա այդ քննարկումների մեջ:

Թվայնացման ռազմավարությունը չպետք է մշակվի և ընդունվի բիզնեսի և կառավարության դռնփակ բանակցությունների արդյունքում: Այն պետք է լինի հանրային լայն քննարկումների առարկա, որպեսզի երաշխավորվի հեռարձակման ծառայություններում բազմակարծությունը և հանրությունը զանազան որակյալ ծրագրերի ավելի մեծ ընտրություն ունենա: Նախընտրելի է, որ ընդունված ռազմավարությունը բերի խորհրդարանի կողմից նոր օրենքների ընդունման, այլ ոչ թե կառավարության որոշումների կամ նախագահի հրամանագրերի: Դա նաև կօգնի անցումը կատարել՝ առանց վտանգելու իրավական որոշակիությունը:

Հունգարիայի օրենսդրական գործընթացի կարող է որպես օրինակ ծառայել: Թվային վերգետնյա հեռուստատեսային հեռարձակումներ իրականացվում են 2004թ.-ից: Ռազմավարության առաջին նախագիծը հրապարակվել է 2006թ.-ի հոկտեմբերի սկզբին: Դրան հետևել են երկու ամիս տևած հանրային խորհրդակցություններ: Վարչապետի գրասենյակը վերջնական տեսքի է բերել ռազմավարությունը՝ հաշվի առնելով այդ խորհրդակցությունների արդյունքները, և դրա հիման վրա պատրաստել պաշտոնական քաղաքականությունը նկարագրող մի փաստաթուղթ: 2007թ.-ի մարտի 7-ին կառավարությունն ընդունել է Հեռարձակման թվային համակարգին անցնելու ազգային ռազմավարությունը և

որոշել է ձեռնարկել կարգավորող միջոցներ, որոնք անհրաժեշտ են ռազմավարությունն իրականացնելու համար: Ավելի ուշ, 2007թ.-ի հունիսին, Յունգարիայի խորհրդարանն ընդունել է Յեռարձակման հաղորդման և թվային համակարգին անցման կանոնների մասին օրենքը (Թվայնացման մասին օրենք) (տես՝ ստորև):

Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵՆ նախարարների կոմիտեի (2003)⁹ երաշխավորությունը պահանջում է, որ թվայնացման ռազմավարությունը անպայման պետք է նախատեսի հետևյալ տարրերը՝

- օպերատորների միջև համագործակցություն,
- պլատֆորմների փոխլրացում,
- ապակողավորման սարքերի փոխգործակցելիությունը,
- բազմազան բովանդակության առկայություն, այդ թվում՝ անվճար եթերային ռադիո և հեռուստատեսային ծառայություններ,
- հաճախականությունների վերաբաշխման հետևանքով թվային տեխնոլոգիաների կողմից ընձեռնված եզակի հնարավորությունների լիարժեք օգտագործում,
- հանրության շահեր, ինչպես նաև բոլոր տեսակի հեռարձակողների, հատկապես՝ ոչ առևտրային և ռեգիոնալ/տեղական հեռարձակողների շահեր և խոչընդոտներ:³⁹

Իրականացման պլանը կամ թվայնացման հայեցակարգը կարող են այլ կարևոր բաղադրիչներ ունենալ: Օրինակ՝ 2009թ.-ին ընդունված Սերբիայի հեռարձակման անալոգային համակարգից դեպի թվային համակարգ անցման գործողությունների ծրագիրը պարունակում է հետևյալ դրույթները՝ մուլտիպլեքսներում երաշխավորված տեղ ունեն միայն այն հեռարձակողները, ովքեր անալոգային հեռարձակման դադարեցման պահին ունեն գործող լիցենզիաներ, ցանցի ապագա օպերատորները պարտավոր են բոլոր հեռարձակողների համար երաշխավորել որակի, մատչելիության և սակագների հետ կապված հավասար և խտրականությունից զերծ պայմաններ, իսկ սակագինը հիմնված է լինելու ծախսածածկման սկզբունքի վրա, օպերատորները միևնույն ժամանակ հեռարձակման (simulcast) համար հատուկ վճար չպետք է սահմանեն, և երաշխավորվում է, որ պահպանվելու են ծառայության նույն գոտիները, որոնք տրամադրվել են ուժի մեջ եղած լիցենզիաներով:⁴⁰

Ուկրաինայում թվայնացման գործընթացի հետ կապված հիմնական փաստաթուղթը *«Թվային հեռուստատեսային և ռադիո հեռարձակման ներդրման պետական ծրագիրն»* է, որն ընդունվել է 2008թ.-ի նոյեմբերին, նախարարների կաբինետի թիվ 1085 որոշմամբ: Ծրագրի շրջանակներում կառավարությունը

³⁹ Տես՝ Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման մասին ԵՆ նախարարների կոմիտեի (2003)⁹ երաշխավորության հավելված

⁴⁰ Տես՝ ,Թվային վերգետնյա հեռուստատեսության զարգացումը Ռուսաստանում և Ուկրաինայում, IRIS-Plus, 2010-1. Ստրասբուրգ, Եվրոպական աուդիովիզուալ կենտրոն, 2010, էջ 33

պատրաստվում է նաև հեշտացնել թվային հեռուստացույցների, անալոգային հեռուստացույցների համար ազդանշանների ադապտերների, ինչպես նաև թվային հեռարձակման համար անհրաժեշտ այլ մասերի և տարրերի արտադրությունը: Ծրագրով նախատեսվում է ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրել հետազոտական ինստիտուտներին՝ «թվային վերգետնյա հեռարձակման ներդրման ուղղված միջազգային գործողություններին Ուկրաինայի մասնակցության գիտական և տեխնոլոգիական հիմքերը դնելու» նպատակով: Հեռարձակման թվային համակարգին անցնելու վերաբերյալ հայեցակարգային ուղեցույցներ է տրամադրել նաև Ուկրաինայի հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհուրդը: Ազգային խորհուրդը հատուկ վերահսկող և լիցենզավորող մարմին է, որը լիազորված է կատարել հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրության դրույթները և հետևել, որ պետական և մասնավոր հեռարձակողները կատարեն օրենքի պահանջները: Այդ ուղեցույցները ներկայացված են «Ուկրաինայի ազգային հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի զարգացման ծրագրի» տեսքով: Չարգացման ծրագիրը սահմանում է մի շարք հիմնական կանոններ, որոնց Ազգային խորհուրդը խոստացել է հետևել թվայնացման գործընթացի ժամանակ: Ի թիվս այլ պարտավորությունների, այն խոստացել է «ապահովել, թվային համակարգին անցնելուց հետո այն լիցենզիա ունեցողները, որոնք այդ պահին աշխատում են անալոգային վերգետնյա հեռարձակմամբ, պահպանեն հեռարձակելու իրենց իրավունքը՝ չկորցնելով իրենց լսարանը»:⁴¹

2. Օրենսդրություն

Հայեցակարգում գրված է օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության մասին, սակայն այդ փոփոխությունների էությունն այնքան էլ պարզ չէ: Սահմանված է, որ օրենսդրական դաշտը պետք է ձևավորվի մինչև 2010թ.-ի հուլիսի 20-ը: Սակայն պարզ չէ, թե դա ինչ է նշանակում: Արդյո՞ք մինչև այդ օրն օրենսդրական դաշտը պետք է լրիվ պատրաստ և ուժի մեջ լինի, թե դա այն ժամկետն է, երբ պետք է ներկայացվեն օրենսդրական փոփոխությունների առաջարկությունները: Եթե խոսքը գնում է առաջինի մասին, ապա այդ ժամկետն իրատեսական չէ, եթե իհարկե օրենսդրական փոփոխությունների առաջարկություններն արդեն պատրաստ չեն կամ շատ շուտով պատրաստ չեն լինելու, որովհետև օրենքների մեջ փոփոխություններ կատարելը կամ նոր օրենքներ ընդունելը (ի տարբերություն կարգավորման այլ մեխանիզմների և ձևերի) սովորաբար բավականին երկար ժամանակ է պահանջում: Մինչև նույն ժամկետն անհրաժեշտ է նաև ազգային ստանդարտներ ընդունել: Ենթադրելով, որ դրանք կարող են ոչ թե օրենքի, այլ որևէ ուրիշ իրավական ակտի տեսքով ընդունվել, այս ժամկետը կարող է իրատեսական լինել, եթե ստանդարտներն

⁴¹ Տես՝ Անդրեյ Ռիխտեր և Տարաս Շեվչենկո, «Թվային վերգետնյա հեռուստատեսության զարգացումը Ռուսաստանում և Ուկրաինայում», IRIS-Plus, 2010-1. Ստրասբուրգ, Եվրոպական աուդիովիզուալ կենտրոն, 2010, էջ 9

արդեն մշակված են: Ցանկացած դեպքում, այս պահին արդեն անհրաժեշտ է գործընթացը մի քիչ արագացնել:

Օրենսդիր աշխատանքի հետ կապված անհրաժեշտ է հիշել մի բան, որի մասին արդեն խոսվել է այլ համատեքստում: Խոսքը գնում է այն մասին, որ թվայնացումը չի լուծում հեռարձակման ոլորտում արդեն իսկ առկա այլ խնդիրները, ինչպիսիք են՝ կառավարության միջամտությունը, մենաշնորհները, կառուցվածքային խնդիրները, կարգավորող մարմնի կամ հանրային հեռարձակողի թույլ լինելու հետ կապված պրոբլեմները: Նմանատիպ խնդիրները պետք է լուծվեն մինչև թվայնացումը և/կամ թվայնացման գործընթացին զուգահեռ: Օրենսդիր աշխատանքի առումով դա նշանակում է, որ որոշ օրենքների փոփոխություններ կարող են անհրաժեշտ լինել հենց այս տեսակ ընդհանուր խնդիրները (օրինակ՝ կոնցենտրացիայի ռիսկի աճի խնդիրը) լուծելու համար, այլ ոչ թե բուն թվայնացման համար, որի համար այլ գործիքները, և ոչ թե օրենքները, կարող են բավարար լինել:

Այն, թե ինչ նոր օրենքներ պետք է ընդունվեն և որ օրենքները պետք է փոփոխվեն, կախված է երկրում հեռարձակմանը վերաբերող իրավական դաշտի կառուցվածքից: Թվայնացման մասին առանձին օրենք ունենալը պարտադիր չէ: Այդպիսի օրենքներ կան միայն մի քանի երկրներում: Ինչպես արդեն նշվել է վերևում, այսպիսի օրենք կամ թվայնացման ռազմավարությունն իրականացնելու համար հատուկ օրենք ունենալը կարող է լավ գաղափար լինել, քանի որ դա նպաստում է գործընթացի թափանցիկությանը: Սակայն թվայնացումը կարելի է նույն հաջողությամբ իրականացնել՝ գործող օրենքներում փոփոխություններ կատարելու միջոցով: Այնուամենայնիվ, թվայնացման ռազմավարությունը պետք է պաշտպանվի պատշաճ իրավական դաշտով: Ժողովրդավարական հաշվետվողականության, թափանցիկության և տեղեկատվության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության նկատառումներով, ավելի լավ է ունենալ սովորական օրինաստեղծ գործընթացով (խորհրդարանի կողմից) ընդունված օրենսդրություն, քան կառավարության որոշումներ կամ նախագահի հրամանագրեր: Իրավական դաշտը պետք է թույլ տա և, հուսանք, նաև խրախուսի թվայնացումը: Անհրաժեշտ է, որ գործընթացը և դրա տարբեր բաղադրիչները (օրինակ՝ լիցենզավորման նոր ռեժիմը, ենթակառուցվածքների հասանելիությունը, ընդունիչ սարքեր ձեռքբերելու հետ կապված աջակցությունը) ունենան պատշաճ իրավական հիմք: Ընդհանուր առմամբ, ավելի լավ է ոչ թե բազմաթիվ հատուկ օրենքներ ունենալ, այլ արդիականացնել գործող օրենսդրությունը և ապահովել, որ յուրաքանչյուր խնդիր պատշաճ ձևով կարգավորված է օրենսդրությամբ: Ինչ վերաբերում է նրան, թե օրենքներն ինչ կարող են խրախուսել, այստեղ խոսքը գնում է օպերատորների միջև համագործակցության, պլատֆորմների փոխլրացման, ինչպես նաև ապակողմավորման սարքերի փոխգործակցելիության մասին: Լիցենզավորման համակարգի միջոցով կարգավորող մարմինը կարող է խրախուսել բովանդակության, այդ թվում՝ անվճար և վճարովի հեռարձակման ծառայությունների բազմազանությունը: Եթե հանրային հեռարձակողին թվայնացման գործընթացում հատուկ դեր է հատկացվում, դա պետք է

ամրագրված լինի օրենքով, իսկ հեռարձակողը պետք է բավարար ռեսուրսներ ստանա:

Անցումային շրջանի շատ խնդիրներ պետք է լուծվեն այնպես, որպեսզի փոփոխությունները կատարվեն՝ չվտանգելով իրավական որոշակիությունը: Այդ խնդիրները կարող են ներառվել օրենքի անցումային դրույթների մեջ կամ, որոշ դեպքերում, կարգավորման այլ գործիքների մեջ:

Յետևյալ խնդիրները հավանաբար պետք է կարգավորվեն օրենքով՝

- Լիցենզավորման գործընթացը և թվային վերգետնյա հեռուստատեսության լիցենզիայի տարբեր մասերը,
- Լիցենզավորման խնդիրներով զբաղվող մարմնի կարգավիճակը և դերը (անկախությունը),
- Ծրագրերի ընտրության չափանիշները, որպեսզի բազմազանություն և բազմակարծություն ապահովվի,
- Ենթակառուցվածքային խնդիրներ (հասանելիություն, փոխկապակցվածություն),
- Շուկայի վրա էական ազդեցություն ունեցող միջոցառումների հատուկ դերը՝ գերիշխող դիրքի չարաշահումից խուսափելու համար:

Ուշադրություն պետք է դարձվի նրան, թե ինչպես կարելի է օրենքի միջոցով հասնել բազմազանության և բազմակարծության: Այս հարցը կարևոր է ծրագրերի ընտրության չափանիշների, ինչպես նաև լիցենզավորման գործընթացի առնչությամբ: Ինչպես ներկայացված է ստորև, ՀՀ օրենսդրություն, և հատկապես՝ կարգավորող մարմինը, պետք է ավելի շատ ընդգծեն բազմակարծությունն ու բազմազանությունը:

ԵԽԽՎ-ի թիվ 1636 (2008) բանաձևի համաձայն, ՉԼՄ-ների սեփականության թափանցիկությունը համարվում է ժողովրդավարական հասարակության մեջ ՉԼՄ-ների չափորոշիչներից մեկը: Բանաձևում գրված է՝ *«օրենսդրության միջոցով անհրաժեշտ է պայքարել ՉԼՄ-ների մենաշնորհների և շուկայում գերիշխող դիրքի դեմ: Բացի այդ, անհրաժեշտ է կոնկրետ դրական քայլեր ձեռնարկել ՉԼՄ-ներում բազմակարծությունը խթանելու ուղղությամբ»:*

Շուկայի վրա էական ազդեցություն ունեցող միջոցառումների և հասանելիության հետ կապված խնդիրներ կարելի է գտնել նաև մրցակցության և/կամ (հեռա)հաղորդակցության մասին օրենքներում: Անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանի այդ օրենքները, որպեսզի իրավական բոլոր հարցերը դրանցով կարգավորված լինեն և չլինի բացասական կրկնություն, որը կարող է շփոթություն առաջացնել:

Ինչպես արդեն նշվել է, 2007թ.-ին Հունգարիայի խորհրդարանն ընդունել է Թվայնացման մասին օրենքը կամ հեռարձակման հաղորդման և թվային համակարգի անցման կանոնների մասին օրենքը: Այն պարունակում է ՉԼՄ-ների բազմակարծությունը խթանող մի շարք դրույթներ: Այս առումով, օրենքը որոշ պարտավորություններ է դնում մալուխային օպերատորների և նմանատիպ այլ

ծառայություններ մատուցողների վրա, որոնք կապված են ազգային մշակույթը, մշակութային բազմազանությունը և բազմակարծությունը պահպանելու և խթանելու հետ: Դրանց մեջ մտնում է այն կանոնների վերաձևակերպումը, որոնք կապված են “ must-carry” կանոնների հետ:

Թվայնացման մասին օրենքի մեջ ամենակարևորն այն է, որ օրենքը սահմանում է օրենսդրական դաշտը, որն անհրաժեշտ է թվային վերգետնյա հեռուստատեսային ծառայություններ ստեղծելու համար: Օրենքում սահմանվում են մի շարք հասկացություններ, ինչպիսիք են՝ ,մուլտիպլեքսե, ,կիրառական ծրագրավորման միջոց (“ application programme interface”), ,ծրագրերի էլեկտրոնային ուղեցույց կամ ,թվային հեռուստատեսության ինտերակտիվ ծառայություն: Օրենքը նաև հստակ չափանիշներ է տալիս հեռարձակման նպատակներով հաճախականություններ օգտագործելու համար և սահմանում է մրցակցությունը խթանող մի շարք կանոններ: Օրենքում սահմանված է նաև վերգետնյա թվային հեռարձակման հաղորդման ծառայությունների օպերատորների մրցույթի կարգը: Թվայնացման մասին օրենքի իրականացման համար պատասխանատու է կարգավորող մարմինը և հատուկ խորհրդարանական հանձնաժողովը, որը հայտարարում է մուլտիպլեքսների օպերատորների մրցույթներ:⁴²

Եվս մի օրինակ. 2005թ.-ի հունիսի 14-ին Իսպանիայի խորհրդարանն ընդունել էր թվային վերգետնյա հեռուստատեսության խթանման մասին օրենք: Այստեղ փաստորեն փոփոխության էին ենթարկվել լրատվամիջոցներին և հեռահաղորդակցության ոլորտին վերաբերող մի շարք հին օրենսդրական ակտեր: Նոր օրենքով տեղական մուլտիպլեքսերում մինչև երկու թվային վերգետնյա հեռուստածրագրերի ծառայություններ թողնվել էին տեղական կառավարությունների համար: Տեղական վերգետնյա հեռուստատեսության լիցենզիաների տևողությունը նախկին 5 տարվա փոխարեն դարձվել էր 10 տարի: Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց արգելվել էր միևնույն տարածքում մեկից ավելի լիցենզիաներ ունենալը: Նոր օրենքում ներառվել էին դրույթներ հաշմանդամների համար թվային վերգետնյա հեռուստատեսության հասանելիության և թվային վերգետնյա հանրային հեռարձակողների կողմից ռեգիոնալ լեզուների օգտագործման խրախուսման վերաբերյալ: Դրանից հետո որոշվեց, որ անհրաժեշտ է ռադիոյի և հեռուստատեսության մասին նոր ընդհանուր օրենք մշակել, որը պետք է միավորի աուդիովիզուալ ոլորտին վերաբերող բոլոր կանոնները և սահմանի լիցենզիաների, հանրային հեռարձակման և բազմակարծության վերաբերյալ հիմնական սկզբունքները: Օրենքի մշակումը տևեց ավելի քան չորս տարի և օրենքի նախագիծը խորհրդարան ուղարկվեց միայն 2009թ.-ի վերջում:⁴³

⁴² Մ. Լենգել, ,Յունգարիա. Թվայնացման մասին օրենքը և հեռարձակման մասին օրենքի փոփոխությունները // IRIS 2007-8:14/23 Տես՝ <http://merlin.obs.coe.int/iris/2007/8/article23.en.html>

⁴³ Ալբերտո Պերես Գոմես ,Իսպանիա. Թվային վերգետնյա հեռուստատեսության խթանման մասին նոր օրենքը // IRIS 2005-7:11/18 Տես՝ <http://merlin.obs.coe.int/iris/2005/7/article18.en.html> և Լարա Մարկոս և Էնրիկ Էնրիկս. ,Իսպանիա. Աուդիովիզուալ օրենքի նախագիծը // IRIS 2010-1:1/19 Տես՝ <http://merlin.obs.coe.int/iris/2010/1/article19.en.html>

«Յեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը (և ոլորտին վերաբերող մի շարք այլ օրենքներ) փոփոխվել են 2009թ.-ին, սակայն այդ փոփոխությունների մեջ թվայնացումը նշված չէ: Այս առումով, մենք ցանկանում ենք հղում կատարել «Յեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցչի նախկինում կատարված առաջարկություններին, այսինքն՝ այն նախագծի, որը 2009թ.-ին ընդունվել է Ազգային ժողովի կողմից:⁴⁴

Օրինակ՝ փոփոխությունների համաձայն, Խորհրդի թեկնածուները չեն կարող ապահովել գաղափարական և քաղաքական բազմակարծություն, ինչը ցանկացած հանրային հեռարձակման ելությունն է: Ըստ սահմանման, նրանք քաղաքական կամ գաղափարական փոքրամասնություններ չեն ներկայացնում, չնայած, որ պարտավոր են բազմակարծություն ապահովել (իրենց երդման համաձայն): Իրենց նշանակման (նախագահի կողմից) մեթոդի բերումով նրանք բազմակարծիք տեսակետներ չեն ներկայացնում:

Յեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի թեկնածուների ընտրության ընթացակարգը հիմնական մի թերություն ունի, որը կայանում է նրանում, որ թեկնածուների կողմից հանձնվող թեստերից և նրանց ներկայացվող պահանջներից և ոչ մեկը ազնվություն, բարոյականություն կամ իրենց առաքելության ըմբռնում չի պահանջում:

Հանրային հեռարձակողի և կարգավորող մարմնի ֆինանսավորման մեխանիզմը խորհրդարանական մեծամասնությանը թույլ է տալիս հեշտությամբ պատժել կամ խրախուսել նրանց՝ այդ մարմինները մեծամասնությունից կախյալ վիճակի մեջ դնելով: Այս պարագայում, հանրային պարտականություններ կատարելու փոխարեն «անկախ հանրային հեռարձակողը» և «անկախ կարգավորող մարմինը» զբաղվելու են ինքնագրաքննությամբ:

Մի քանի հոդվածներում արված փոփոխությունները հանրային հեռարձակումը դնում են Յեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հսկողության տակ: Այսպիսով, հանրային հեռարձակողը կախվածության մեջ է դրվում երկու մարմիններից՝ խորհրդից և հանձնաժողովից, որոնք տարբեր ձևերով են նշանակվում (ընտրվում), ինչի արդյունքում հնարավոր է, որ տարբեր, եթե ոչ իրար հակասող հրամաններ արձակեն: Հանրային հեռարձակման հետ կապված նրանց լիազորությունների տարբերությունը բավականաչափ հստակ չէ, ինչը կարող է բերել լիազորությունների սահմանների վերաբերյալ լրացուցիչ բախումների:

Հաշվի առնելով թվային միջավայրում հանրային հեռարձակողի կարևորությունը, օրենքը պետք է հստակ սահմանի գործառույթները և պարտականությունները, ինչպես նաև երաշխավորի հեռարձակողի անկախությունը և այդ գործառույթները կատարելու համար բավարար ռեսուրսների առկայությունը:

⁴⁴ Տես՝ http://www.osce.org/documents/rfm/2009/04/37230_en.pdf

Փոփոխությունների մեջ անտեսվում է նաև 2008թ.-ին հայտարարված մրցույթների սառեցման սուր խնդիրը: Մրցույթները սառեցվել են Ազգային ժողովի կողմից արդեն ընդունված օրենքում փոփոխություններ կատարելու միջոցով: